№ 21 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30 № 21

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1909 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը՝ 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք դրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ (հին բաժանորդներից խնդրվում է ուղարկել նախկին տպագրված հասցէն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Շաբաթ, յունվարի 31-ին
Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան դահլիճներում
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՑ

ՏԱՐԱԶԱՒՈՐ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ
Grand Balet «Divertisment décadense»
Avec les danses internationales

Թիֆլիսի Արքունական թատրոնի բալէտային խմբի սօլիստուհիների և սօլիստների մասնակցութեամբ և Վարշաւայի կառավարական թատրոնների բալէտմէյստեր Մ. Ս. ՆՕՎԱԿՕՎՍԿՈՒ ղեկավարութեամբ տեղի կունենան

Կօնֆետտիի անձրև, Սերպանտին, ՊԱՐԵՐ Կենդանի ծաղիկներ, Պրաի-շվօ, և այլն։

ժամանակ Grand valse-ի ժամանակ

Հասարակութեան մասնակցութեամբ
Դահլիճը շքեղ կերպով կը լուսաւորվի գոյնզգոյն ճրագներով
ՎԵՀԱՍՔԱՆՉ ԿՕՏԻԼԻՕՆ ՄՕՆՍՏՐ

Դիմացկուն և մտածված՝ ընտրող կամ դաղափարական զգեստների համար թէ հասարակութեան և թէ ժիւրիի կողմից կը տրվեն պարգևներ։

Պարերի ժամանակ խաղարկութեան կենթարկվի երկու արժէքաւոր ընծայ՝ ի յիշատակ երեկոյթի։

Պարերի և միջարարների ժամանակ կը նուագեն արքունական թատրոնի լարանուագ-երաժշտական և զինուորական-երաժշտական խմբերը՝ Պրէսմանի ղեկավարութեամբ։

Դահլիճը շքեղ կերպով կը լուսաւորվի գոյնզգոյն ճրագներով և կը զարդարվի կենդանի ծաղիկներով ու բոյսերով։

Դիմակներ ունենալը պարտաւորեցուցիչ չէ։

Դիմակներ ունեցող անձերին խնդրվում է յայտնել իրանց ով լինելու մասին երեկոյթի կառավարչին։

Գիշերվայ ժամը 1-ից յետոյ դիմակները պէտք է վերցնել։

Հանդէսի սկիզբը երեկոյեան ժամը 10-ից

Բալէտը կը սկսվի արքունական թատրոնում «Աիդա» օպերան վերջանալուց յետոյ։ Տոմսակների գինն է 2 ր. 20 կ.։ Ուսանողները՝ համալսարանների՝ վճարում են 1 ր. 10 կոպէկ։

Տոմսակները վաճառվում են Ե. Ա. Ծատուրեանի խանութում (Դվօրցօվայա փ.), իսկ երեկոյթի օրը՝ մուտքի դրան մօտ։ (ու. շ.) 90. 2—1

Թիֆլիսի Ժողովարան
Ուրբաթ, յունվարի 30-ին
ՀԱՅ ԴՊՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Յօգուտ Մարիամեան-Յովնանեան ուսումնարանի տքաւոր աշակերտուհիների
Կը ներկայացնէ առաջին անգամ
ՅԻՄԱՐ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԽԵԼՕՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ
«ԵՂԲԱՅՐ ԷՐՆՍՏ»
4 գ. Օսկար Ուայլդի թարգմ., Լ. Բարայեանի
Մասնակցում են օր. Ադամեան, տ. տ. Արաքս, Մելիքեան, Յասմիկ, պ. պ. Աւետեան, Զարիֆեան, Թաշճեան, Թորոսեան, Սանթուրճեան։
Երեկոյթին կը նուագեն սազանդարները։
Սկիզբը ուղիղ 8½ ժ. երեկոյեան
Ռեժիսօր՝ Մ. Քափանակեան
91. 1—1

ԹԻՖԼԻՍԻ
ՍԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(ամբուլատորային ընդունելութիւն)
Եկող հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնգիլհարդտի։
Տէլէֆօն 695
Ե. Գ. ՖԷՏԻՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։
Վ. Դ. ԴԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշու հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԵԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
Բ. Մ. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։
Օպերացիաները և խորհրդատուութիւնը ըստ համաձայնութեան։
Շուտով բացվելու է ստացիօնարական բաժանմունք 30 մահճակալներով։
(ա. օ.) ա. 38. 100—13

ԴԱՒԱՆԱՆՔԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մի քանի տարի սրանից առաջ, երբ ազատագրական շարժման ալիքները հասան մեր երկրին, ասպարէզ եկան մի շարք համախմբումներ, որոնք յայտարարեցին իրանց ծայրայեղ ձախակողմեանները։

Նրանցից իւրաքանչիւրը աշխատում էր կարելին չափ ուժեղ ձայնով աղաղակել, թէ նա աւելի ձախակողմեան է, քան ուրիշները։

Ձախակողմեան երևալը դարձել էր մի մրցութիւն, մի «սպօրտ», որի համար ներելի էին համարվում կեղծիքը, խորամանկութիւնները և ակներև անհեթեթութիւնները։

Եւ որպէսզի ապաւորութիւնը աւելի ուժեղ և փայլուն լինի, աշխատում էին ուրիշներին ներկայացնել աջակողմեան, թէկուզ դա բոլորովին հակառակ լինէր իրականութեանը։

Մենք առիթներ ունեցանք խօսելու այն ժամանակվայ իրարանցումի միջոցին, որ անկեղծութիւն և հարազատ հաւատամունք չը կայ շատ ազատակողների մէջ, որ «ձախակողմեան» անունը միայն համակերպվելու համար իւրացրած բառ է։

Եւ արդարև կեանքի ամենօրեայ փաստերը մեզ ապացոյցներ էին բերում, որ ձախակողմեան մականուան տակ ծածկված էին լինում ամենածայրայեղ աջակողմեան, պահպանողական, կղերական և խաւարամտական գործեր։

Մենք չէինք հաւատում կարմրաթաթախ կեղծիքներին և իրաւունք ունէինք չը հաւատալու։ Բայց մենք խորին կերպով վշտանում էինք, տեսնելով թէ ինչպէս համակերպման սարսափելի ձգումը հրում է մարդկանց դէպի մի շարք այնպիսի արարքներ, որոնք յետոյ պէտք է թանգ նստէին մեր հասարակութեան վրա։

Անցել են օրեր, պարզվել է շատքան, բայց մարդկանցից շատերը դիտակից չեն իրերի դրութեան և չեն ցանկանում այն գիրքը իւրացնել, որը արժանի է անկեղծ և բանիմաց անձնաւորութիւններին։ Այժմ էլ մենք տեսնում ենք, թէ ինչպէս մարդիկ, որոնք երէկ ծայրայեղ ձախակողմեան մականուն էին հարատևարում, այսօր շտապում են մէկը միւսի ետևից կարելիին չափ աջակողմեան հռչակվելու։

Ընկերութիւնների, ժողովների, կլոբների, զանազան տեսակ խորհրդակցութիւնների մէջ մենք ամեն օր հանդիպում ենք ձախակողմեանների, որոնք լուրջ կամ կիսակատակ անուանում են իրանց չափաւոր և նոյնիսկ «աջացած»։ Եւ տպաւորութիւնը լրացնելու համար ընդգծում են, որ մենք անշեղ մշակականներս արմատականներ ենք, մշտական օպոզիցիայի մէջ։

Թող այդպէս լինի։ Մենք կանգնած ենք հաստատ հողի վրա և մեր գործունէութեան ծրագիրը հիմնել ենք ժողովրդական իրական բարիքների լայն ըմբռնողութեան վրա։ Մենք լինելով ժողովրդական ինքնագործութեան ջերմ քարոզիչներ, թանգ գնահատելով կուլտուրական առաջադիմութեան շինարար նշանակութիւնը ժողովրդի համար, լայն ըմբռնելով անհատի ազատ քաղաքացիական գործունէութեան կարևորութիւնը՝ աշխատել ենք ուժեղ և կորական կերպով ընդգծել մեր դաւանանքը։ Եւ եթէ երէկ համակերպողների շարքերը աշխատում էին մեզնից աւելի ձախակողմեան երևալ, իսկ այսօր ամեն ճիգ են թափում աջակողմեան երևալու, դա մեզ համար փոյթ չէ։ Մենք դիտաւորութիւն չունենք համակերպման խաղեր խաղալ։ Եւ կը մնանք հաստատ ու հաւատարիմ մեր ծրագիրներին և մեր դաւանանքներին, հրաւիրելով հասարակութեանը խստանալ ազնիւ և սուրբ հանրային գործի շուրջը, մտցնելու խոր գիտակցութիւն և ժողովրդական լայն ոգի մեր բոլոր հասարակական գործառնութիւնների մէջ։

Ռամկավարական այն ծրագիրը, որ համախմբել է լաւագոյն մտածողներին և գործիչներին, չէ կարող համակերպվող թուլամորթների քմահաճոյքին ենթարկվել և այս ու այն կողմ քաշքշվել։

Մենք մերկացնում էինք մեր հակերպվողների անհեթեթութիւնները և վտանգաւոր խաղերը և կը ցանկանայինք, որ համակերպվելու հիւանդոտ հակումները նորատեսակ վտանգներ չը բերէին մեր հասարակութեան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բերլին, 28 յունվարի

Վիլհելմ կայսրի կենացին Էդուարդ թագաւորը իր և թագուհու կողմից սրտագին շնորհակալութիւն յայտնեց ողջոյնի և գեղեցիկ գոհունակ ընդունելութեան համար, յիշեց իր կիլ և կրոնբերգ այցելութիւնների մասին և առանձին բաւականութեան զգացմունքներ արտայայտեց այն առիթով, որ Ալէքսանդրա թագուհին կարող եղաւ ուղեկցել իրան այժմեան այցելութեան ժամանակ։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 28 յունվարի

Ըէյտերին հաղորդում են, որ Անգլիան համաձայնութիւն կապեց Սիամի հետ. Կելանտան, Տրինգաու և Պէտա երկիրներն անցնում են Անգլիային ի սեփականութիւն առևտրական արտօնութիւնների։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 28 յունվարի

«Դէյլի Մրօնիկլ», «Դէյլի Տէլէգրաֆ» և «Մօրնինգ-Պօստ» սրտագին ողջունում են մարօկկեան համաձայնութիւնը։ («Հ. Գ.»)

—

Սանկտ-Պետերբուրգ, 28 յունվարի

Երկու պալատները ընդունեցին ընտրողական իրաւունքի բարեկարգման առաջարկութիւնը վերջնական ձևով։ Ընտրողական իրաւունքը հիմնված է երկու պալատների համեմատական ներկայացուցչութեան սկզբունքի և ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքի վրա։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 28 յունվարի

Բինէրը վերջացրեց կաբինէտը վերակազմելու մասին սկսած բանակցութիւնները։ Նրա կազմի մէջ մտնելու են մինիստրների խորհրդի նախագահ Բինէրը, ներքին գործերի մինիստր Գէրբօպլ, ֆինանսների—Բիլինսկի, առևտրի—Վէյսկիրխէն, արդարադատութեան—նախկին պատգամաւոր Գոխէնբուրգէր, լուսաւորութեան—կոմս Շտիւրգկ, ճան. հաղորդակցութեան—Վրբա, երկրագործութեան—պրոֆ. Բրաֆ, պաշտպանութեան— Գէօրգի, աշխատանքի—Ռիտա, առանց պօրտֆէլների— Զաչէկ, Աբրահամովիչ և Շրէյներ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 28 յունվարի

«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Բէլգրադից. «Հին-արմատականների կլուբում քննվեց զինուորական մինիստրի պահանջած 33½ միլիոն դինար յատկացնելու խնդիրը։ Լուրերին նայած, պատգամաւորների մեծ մասը հակառակ է խօսել։ Սպասվում է, որ զինուորական մինիստրը հրաժարական տայ, որովհետև նա պայման էր դրել վաղօրօք, որ եթէ այդ գումարը կը տրվի, կը մնայ Վէլիմիրօվիչի կաբինէտում, իսկ եթէ ոչ՝ հրաժարական կը տայ։ («Հ. Գ.»)

—

Բագու, 28 յունվարի

Տեղի ունեցաւ քաղաքային դումայից ընտրված այն յատուկ մանձնաժողովի նիստը, որ զբաղվելու է քաղաքապետութեան՝ յանցաւոր տարրերի դէմ կռուելու խնդրում վարչութեանը աջակցելով։ («Հ. Գ.»)

—

Տօմսկ, 28 յունվարի

Ձերբակալվեց սօցիալ-դեմօկրատական կոմիտէտը 16 հոգուց բաղկացած։ Գրաւվեցին կնիքներ և գրութիւններ։ («Հ. Գ.»)

—

Իզօվկա, 28 յունվարի

Տեղեկութիւններ ստացվեցին, որ Դոնի շրջանի Շասինովսկի հանքում տեղի է ունեցել խոշոր կատաստրոֆա։ Մանրամասնութիւններ առայժմ չը կան։ («Հ. Գ.»)

—

Կիէվ, 22 յունվարի

Պոլտավայի նահանգապետը հրամայել է բոլոր գաւառապետներին իրան ներկայացնել լրագրական բոլոր թղթակիցների ցուցակը, յիշելով իւրաքանչիւրի ինչ ազգութեան պատկանելը։ («Рѣчь»)

—

Եկատերինօսլաւ, 22 յունվարի

Իսկական ռուս մարդկանց ժողովում պատգամաւոր Օբրազցովը մի որոտալից ճառ է արտասանել Պետական Դումայի դէմ։ Նա անուանել է նրան ոչ-ռուսական, վատ աշխատող, յայտնելով որ նոյեմբերի 9-ի օրինքն ընդունելը յեղափոխութիւն առաջ կը բերէ գիւղացիների մէջ։ («Рѣчь»)

—

Օդէսսա, 22 յունվարի

Օդէսսայի համալսարանի նախկին տեսուչ Զանչեվսկին, որին նահանգապետը արգելել էր դասախօսել, Օդէսսայում զինուորական դրութիւնը վերանալու շնորհիւ այսօր վերադարձաւ համալսարան և կարդաց իր առաջին դասախօսութիւնը 1000 ուսանողների ներկայութեամբ, որոնք դիմաւորեցին նրան օվացիաներով և մի շարք ճառերով։ («Рѣчь»)

—

Պետերբուրգից հեռագրում են Մոսկվայում հրատարակվող «Р. У.» լրագրին հետևեալը. «Պետական Դումայի կուլուարներում պատմում են, որ Մոսկվայի մի ինչոր ազնուական մենամարտի է հրաւիրել Պօլովցեվին, որովհետև նա գտնում է, որ Պոլովցեվը Պետական Դումայում իր վերջին վարմունքով արտաւորում է ազնուական դասակարգին»։

—

Բերլին, 28 յունվարի

Ցերեկը Էդուարդը թագաւորը աւտոմոբիլով շրջագայեց։ Հասարակութիւնը ոգևորված ողջունեց նրան։ Երեկոյեան հանդիսաւոր ճաշկերոյթ տեղի ունեցաւ պալատում։ Վեհապետի դէմ յանդիման նստած էր կայսրութեան կանցլերը Հրաւիրվածների մէջ կային ռազմ բուրգոմիստրը, ռազմների պալատի, ըէյխստագի և լանդտագի նախագահները, բոլոր մինիստրները և ստատս-սեկրետարները։ Ճաշի ժամանակ Վիլհելմ կայսրը առաջարկեց բաժակ և սրտագին ողջունեց թագաւորին և թագուհուն։ Նա ասաց. «Մեզ միացնում են հին ուանդութիւններ և ազգակցութեան սերտ կապեր։ Մեր յաճախակի հանդիպումների մէջ ես միշտ վայելում էի առանձին հաճոյք»։ Ցիշեցնելով իր այցելութիւնը Վինձօրում 1908 թ. կայսրը յոյս յայտնեց, որ անգլիական արքայական զոյգին դուր կը գայ Բերլինը և նա կը պահպանէ իր ընակութեան մասին, թէև կարճօրայ, միայն հաճելի յիշողութիւններ արտայայտեց առանձին ուրախութիւն, որ կրում են կայսրուհին և ինքն թագուհու ներկայութեան առիթով և շարունակեց. «Ձեր մեծութիւնը կարող է հաւատի լինել, որ ինձ հետ և իմ մայրաքաղաքը, և ամբողջ գերմանական կայսրութիւնը տեսնում է ձեր մեծութեան ներկայութեան մէջ նշան բարեկամական վերաբերմունքի, որ դրդեց ձեր մեծութեանը կատարել այդ այցելութիւնը։ Գերմանական ազգը ողջունում է բրիտանական հզօր համաշխարհային պետութեան վեհապետին հարկ եղած յարգանքով և տեսնում է նրա այցելութեան մէջ մեր երկու երկիրների յարաբերութիւնների ապագայ խաղաղ և բարեկամական զարգացման նոր գրաւական։ Իմանալով թէ որ ասուիճան մի տեսակ են մեր ցանկութիւնները պահպանել և ամրացնել խաղաղութիւնը, ես աւելի լաւ ողջունել չէի կարող ձեր մեծութիւնը, քան արտայայտելով ամուր հաւատս, որ ձեր մեծութեան այցելութիւնը կը նպաստէ այդ մեր ակնկալութիւնների՝ իրագործման։ Արտայայտելով յոյս ձեր թագաւորած լայնածաւալ կայսրութեան յետագայ բարգաւաճման մասին, ես բարձրացնում եմ բաժակ ձեր մեծութեան և նորին մեծութիւն թագուհու համար»։ («Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴՈՐԾԵՐԸ

—

Թաւրիզ, 22 յունվարի

Իրանց նիստում վրացի բոմբաձիգները որոշել են առաջիկայում ևս կռիւը շարունակելու նպատակով հրաւիրել Կովկասից եկի հարիւր վրացիներ։ Վերջիններիս գալը Թաւրիզ սպասվում է մօտ օրերս։

Թաղի-զադէն Ատրպատականի ամբողջ գերիշխանութիւնը իր ձեռքն է ձգել։ Բաղը-խանը ենթարկվել է այդ իշխանութեանը. միայն Սաթթարխանն էր որ չուզեց ենթարկվել և դրա շնորհիւ էլ Թաւրիզի ազգայնականների շարքերում նորից պառակտում ընկաւ։

Ընդհանրապէս վերջին շաբաթվայ ընթացքում Թաւրիզի ֆէդայիները նկատելի կերպով սկսել են թոյլ վերաբերվել շարժմանը։ Պատճառները՝ սկսված ցրտերն են, ձիւն գալը, թերահաւատութիւնը կուի վերջնական ելքի մասին և իրանց շարքերում ընկած պառակտումը, գուցէ և բօպէական զղջումը մերձաւորի առաջ՝ նրան պատճառած վիրաւորանքների համար։

Էյն-ուդ-Դովլէն գրաւել է Թէհրանից Թաւրիզ ուղարկվող պօստային նամականիները։ Թաւրիզում եղած նամականիշները կարող են բաւականացնել երկու շաբաթ միայն։ Էյն-ուդ-Դովլէն առաջարկել է գնել իրանից՝ գրաւված նամականիշները իսկական գներով։ («Нов. Вр.»)

—

Բաղուից յունվարի 22-ին հեռագրում են «Рѣчь» լրագրին.

Թերթերում լոյս տեսան մի շարք յօդուածներ, որոնց հեղինակներն են շահի նախկին ֆաւորիտ աւանտիւրիստ Շապշալը և կապիտան Ուշակովը, որ ձգտում է արդարացնել իրան, բէկցիայի ղեկավարներին, շահին, Լեախովին և ուրիշներին, որպէսզի այդպիսով հաշտեցնեն ռուսաց հասարակական կարծիքը Պարսկաստանին փոխառութիւն անելու պետական խոստման հետ։ Կապիտան Ուշակովը այն մարդն է, որ իր եռանդուն ծառայութեան համար թողնվում է Պարսկաստանում հինգ տարով փոխանակ սովորական երեք. նա էր, որ ոմբակոծեց մէջլիսը, անձամբ ղեկավարեց Զահիր-ուդ-Դովլէի տան կողոպտումը և Լեախովի հրամանով, հակառակ շահի ցանկութեան, կազմակերպեց մի զօրամաս և ուղևորվեց Թաւրիզի յեղափոխականներին ճնշելու։ Այդ միևնոյն Ուշակովը հրամայեց ժարակներով ծեծել կօզակների կանանց ու երեխաներին, որոնք եկել էին արտասուաթոր խնդրելու նրան, որպէսզի իրանց ամուսիններին ու հայրերին չուղարկեն անխուսափելի մահվան առջև։ Այժմ այդ Ուշակովը աշխատում է Պետերբուրգում պարսկական փոխառութեան գործը ապահովել։

—

Բաքուում հրատարակվող թուրքերէն «Իստիֆակ» լրագրի խմբագրութիւնը ստացել է Թէհրանից մի պարսկ կնոջից 200 ռուբլի, խնդրելով ուղարկել այդ գումարը Թաւրիզի անջումանին.

«Հոգով ցաւելով դժբաղդ Թաւրիզցիների համար,—գրում է պարսկուհին,—և ցանկանալով օգնութիւն ցոյց տալ նրանց, ես վաճառեցի ամենաչնչին գնով իմ բոլոր ոսկէ իրեղէններն ու թանգագին զարդերը։ Այդպիսով հաւաքելով 120 թուման (200 ր.), ես չէի իմանում, թէ ինչպես ուղարկեմ Թաւրիզ, որովհետև պօստում չէին ընդունում. բացի դրանից, եթէ իմանան՝ ինչպիսի նպատակի համար է ուղարկվում այդ գումարը, ինձ անպատճառ կը սպանեն։ Որքան էլ ես մտածեցի, ուրիշ միջոց չը գտայ փողը յերեալ տեղը ուղարկելու համար, բայց եթէ ձեր խմբագրութեան միջոցով, որի մասին սրանով ես խոնարհաբար խնդրում եմ ձեզ, պ. խմբագիր։ Սահմանադրականների Ուժեայ»։

Այդ գումարը թերթի խմբագրութիւնը յանձնել է ֆլասված ատրպատականցիների օգտին նուիրաբերութիւններ ընդունող հանդանակիչ յանձնաժողովին, որի համար ստացել է համապատասխան ստորագրութիւն։

—

Լօնդօնի «Թայմս» լրագրի Թէհրանի թղթակիցը հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում։ Նրա ասելով, Սպահանը գրաւող բախտիարցիների Սամսամ-խանը ոչ մի դիմաւորութիւն չէ արտայայտում կռիւ տալու կենտրոնական կառավարութեան դէմ և միանգամայն բաւականանում է Սպահանի տիրապետութեամբ. նրա համակրութեան ու անկեղծութեան մասին դէպի յեղափոխութիւնը չէ կարելի ներկայումս ոչինչ ասել։

Բախտիարցիները Սպահանում օրինակելի կարգապահութիւն են մտցրել։ Շահը Սամսամ-խանի դէմ ուղարկել է բախտիարցի ձիաւորների մի էսկադրոն և մի քանի հարիւրեակ էլ «Լեախովի» կօզակներից, բայց այդ զօրամասերը ճանապարհին կանգ առան կողոպտելով մի շարք գիւղեր և պօստահեռագրական կայարանները։

Թէհրանից Սպահան են ուղարկված հետևակ զօրքերի երկու գնդեր ևս, բայց այժմից արդէն, «Թայմսի» թղթակցի ասելով, երևում է, որ շահը անկարող կը լինի Սպահանը նուաճել։

Սպահանից դէպի հարաւ ապրում է թափառաշրջիկ կասպայցիների ցեղը, որ ունի 10,000-ի չափ զէնք կրող ձիաւորներ։ Այդ ցեղի պետը՝ Սօվեթթ-էդ-Դովլէն, բախտիարցիների ազդեցութեան տակ պատրաստվում է գրաւելու Շիրազը։

Բախտիարցիների ու կասպայցիների հետ անմիջական յարաբերութիւն ունի ազգայնականների եռանդոտ ագիտատոր սէիդ Աբդիւլ-Հիւսէինը։

Քիրմանի շրջակայքում յուզվում է նաև քիւրդերի ցեղը Դաուդ-խանի ղեկավարութեամբ։ Քիրման-շահի քաղաքապահ զօրքը առայժմ զսպված է պահում քիւրդերին։

Հիւսիս-արևմուտքում, Ատրպատականում, կառավարութեան գործերը աւելի ևս վատթար դրութեան մէջ են գտնվում։

Հարաւում, Պարսից ծոցի մօտերքում, արդէն անցնում է յեղափոխական խլրտումների առաջին շրջանը, մեծ ճանապարհների վրա թալանները ու սպանութիւնները շարունակվում են դեռ ևս։

Մեշհեդը, Համադանը և ուրիշ քաղաքները շուտով նոր կարգեր կը կամակերպեն հարաւում նոյնպէս։

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

«Русск. Сл.» լրագրի ասելով, Թիւրք կառավարութիւնը առաջարկել է գերմանական Գօլց գեներալին տարեկան 100,000 ֆրանկ ռոճիկ թիւրքական բանակը վերակազմելու համար։ «Սաբահը» գովասանքով է խօսում ուլեմ-պատգամաւորների համբերողութեան մասին, որը երևան հանեցին նրանք Մակեդոնիայի ազգաբնակութեան դաւանանքների հարցի քննութեան ժամանակ։ Նրանք դրանով բարձրացրին իսլամը, մինչդեռ ամենքը նրանցից մոլեռանդութիւն էին սպասում։

Էնվէր-բէյը ներկայ է եղել զօրքի վերակազմութեան հարցը քննելիս։

—

«Վօսս. Ցայթ.» լրագրին Սալոնիկից հաղորդում են, որ գործերի դրութիւնը Մակեդոնիայում շարունակում է երկիւղալի մնալ։

Երրորդ զօրաբաժնի հրամանատար Մահմուդ-Շէֆքէթ-փաշայի ձեռք առած միջոցները Մակեդոնիայում իրանց գործունէութիւնը վերսկսած հրոսակախմբերի դէմ իրանց նպատակին չեն հասնում, որովհետև զօրքերը զբաղված են զօրախաղերով, մասամբ էլ մօտեցված են բուլգարական սահմանին, իսկ ժանդարմերիան չափազանց թոյլ է հրոսակախմբերի դէմ աջողութեամբ կռիւ մղելու համար։ Կառավարութիւնը զինուորից մահմեդական գիւղական ազգաբնակութիւնը և կարծում է, թէ այդ միջոցը բաւական է հրոսակախմբերի դէմ կռուելու համար։ Սակայն այդ միջոցը ինքն ըստ ինքեան չափազանց պատասխանատու է և լուրջ երկիւղներ է յարուցանում։ Մանաւանդ դժգոհ են թիւրքերը, որոնք մեղադրում են թիւրքաց կառավարութիւնը այն բանում, որ նա չէ պաշտպանում իրանց բուլգարներից, և միևնոյն ժամանակ մահմեդական ազգաբնակութեան զինաւորումը համարում են մի միջոց, որ ուղղված է հենց յոյների դէմ։ Թղթակիցը վերջում այն եզրակացութեան է գալիս, որ Մակեդոնիայում դրութիւնն այնպէս է, որ այդ նահանգը շուտով եւրոպական պետութիւնների ուշադրութեան կենտրոն կարող է դառնալ։

Շատ դժգոհ է և կրեատ կղզու գիւղական ազգաբնակութիւնը նրանով, որ կղզին Յունաստանի հետ միացնելու հարցը մինչև այժմ չէ լուծված։ Յունաստանում հասարակական կարծիքը մեղադրում է գլխաւորապէս Անգլիային այն բանում, որ նա չափազանց սիրալիր վերաբերվելու պատճառով դէպի Թիւրքիան հակառակ է կրետէ կղզու՝ Յունաստանի հետ միացվելուն և գրգռում է թիւրքերին դիմադրելու միացմանը։ Իսկ միւս պետութիւնները, մասնաւորապէս Ֆրանսիան, չեն կամենում փչացնել իրանց յարաբերութիւնները Անգլիայի հետ կրետական հարցի պատճառով։ Յոյները վախենում են, որ եթէ բօպէն ձեռքից փախցվի մինչև կօնֆերէնցիայի դումարումը, Կրետէի միացումը կարող է ապագայում ևս շատ կասկածելի լինել։ Ուշադրութեան արժանի է, որ մինչև անգամ «Նէօն Ատտի» լրագիրը, որը յունական կառավարութեան հայեացքների արտայայտիչն է, ասում է, որ «եթէ այժմեան անորոշ դրութիւնը ձգձգվի, կարող են այնպիսի դէպքեր տեղի ունենալ, երբ Եւրոպան կարող է գլուխ կոցնել և չիմանալ ինչ ձեռնարկել կարգը և խաղաղութիւնը վերականգնելու համար»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՀՎԱՆ ՊԱՏԻԺԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Հեռագրով)

—

Պետերբուրգ, 28 յունվարի

41-րդ նիստը բաց է առաւօտեան ժամը 11 և 15 րօպէին։ Նախագահում է Խօմեակովը։ Կարդացվում է օրակարգը։

Հերթին Դումայի 103 անդամների առաջադրութիւնն է մահվան պատիժը վերացնելու մասին։

Դումայի 30 անդամների մի խումբ առաջարկում է այդ առաջադրութիւնը յանձնել դատական բարենորոգումների մասնաժողովին։

Նակազի համաձայն խօսելու են միայն երկու հեռօրներ առաջադրութիւնը յանձնելու և չը յանձնելու մասին։

Չը յանձնելու օգտին գրվում են խօսելու Բուլատը, Շուլգինը, Դեգէչկօրին և Զամբուլովսկին։ Յանձնելու օգտին ցանկութիւն է յայտնում խօսել միայն Անտոնովը։ Նախագահը անհրաժեշտ է գտնում վիճակ ձգել առաջին չորս հեռօրների միջև։

Առաջինը հանդէս է գալիս իբրև ամենասկիզբը գրված Բուլատը, որ ընդգծում է այն իրողութիւնը, թէ մինչև հոկտ. 17-ի մանիֆէստը մահվան պատիժները Ռուսաստանում շատ քիչ էին թւում։ Իսկ մանիֆէստի ժամանակից, երեք տարվայ ընթացքում, մինչև 1908 թ. յունվարի 18-ը Ռուսաստանում մահվան պատիժ է տրված 2835 մարդու։ Մահվան պատժի վերացումը միշտ և ամենուրեք կրճատել է այն յանցանքների թիւը, որոնք պատժվում են առհասարակ մահով։ (Ձայներ աջակողմից. «Իսկ Կլէմանսօն»)։

Նախագահը խնդրում է մի կողմ թողնել Կլէմանսօյին և չը խօսել տեղից։

Բուլատը շարունակում է. «Ընդհակառակն, մահվան պատիժը ոչ ոքի չէ տարսափեցնում, բայց դէպի յանցագործութիւնները հակումն ունեցող տարրերի մէջ յարուցանում է որոշ չափով հերոսութեան ձգտում, իր կեանքի հետ խաղալու ձգտում և հետևանքում աւելացնում է այնպիսի յանցանքների քանակը, որոնք ենթարկվում են մահվան պատժի։

«Գիտութիւնը վաղուց դատապարտել է մահվան պատիժը։ Ռուսական մամուլում միայն վերջին օրերս երևացին զարշելի թերթուկներ, որոնք թոյլ էին տալիս իրանց մատնանշել, որ իբր մահվան պատիժը սրբագործված է մինչև իսկ Աւետարանով։ Բայց այդ թերթուկները չեն, որ երերելու են ամեն մինի բարոյական-կրօնական զգացմունքը, որ անդառնալի կերպով դատապարտում է մահվան պատիժը։

«Այն յայտարարութեան մէջ, թէ մահվան պատիժը կը վերացվի՝ հէ ց որ մարդասպանները դադարեցնեն տէրրորը, կարելի է տեսնել կամ մեծ ցինիզմ, կամ պետական խլրտիչների լիակատար անհասկացողութիւն։ Չէ կարելի պետութիւնը դնել մարդասպանների հետ մի սախտակի վրա. պետութիւնը չէ կարող անիշխանութեան տնկարան լինել ամեն տեսակ սպանութիւններով։

«Դումայի 30 անդամների առաջարկութիւնը՝ յանձնել առաջադրութիւնը դատական բարենորոգումների մասնաժողովին ինքնին վիրաւորական է Դումայի անդամների համար, որովհետև՝ միթէ նրանց մէջ կայ անգամ մինը, որի համար մահվան պատժի վերացման հարցը մութ լինի։ Ամեն մի մարդ, որ ունի բարոյականութեան զգացմունք, պէտք է ասէ, որ մահվան պատժի ինստիտուտը հարկաւոր է անմիջապէս վերացնել»։ (Ծափահարութիւն ձախակողմում)։

Վիճակով խօսքը պատկանում է Շուլգինին, որը պիտի խօսէ առաջադրութիւնը մասնաժողովին յանձնելու դէմ, և Անտոնովին, որը պիտի խօսէ յօգուտ յանձնելուն։

Անտոնովը գտնում է, որ մահվան պատժի վերացման հարցը բնաւ այնպէս պարզ խնդիր չէ, ինչպէս թւում է նրան յարուցանողին. 103 անդամների առաջարկած ձևով օրինագիծ հրատարակելը օրէնսդրական կանչ կը լինէր և ոչ թէ օրէնսդրական մի ակտ։

«Մենք գտնում ենք, որ այդ չափազանց կարևոր, հիմնական ուսումնասիրութեան կարօտ հարցը բաժանվում է երկու մասի. Նախ՝ վերացումն մահվան պատժի գոյութիւն ունեցող քաղաքացիական կօդէկսների հիման վրա, որոնք մահվան պատիժ են տալիս յանցագործութիւնների սոսկ երկու տեսակին, երկրորդ՝ վերացումն մահվան պատժի զինուորական և զինուորա-ծովային կօդէկսների հիման վրա, որոնք գործադրվում են միայն բացառիկ դրութիւններում, որոնց թիւը ներկայումս Ռուսաստանում շատ մեծ է։ Մահվան պատժի գործադրութիւնը երկրորդ դէպքում սերտ կերպով կապված է նոր բացառիկ դրութիւն մտցնելու հետ, որի մասին կազմած օրինագիծը կը վերջացնէ երկու ամսից յետոյ անձեռնմխելիութեան մասնաժողովը և կը յանձնէ Դումայի ընդհանուր ժողովի քննութեան։

«Մենք հնարաւոր չենք գտնում մակերևոյթաբար վերաբերվել դէպի այնքան լուրջ հարց, որպիսին մահվան պատժի վերացումն է. առաջարկում ենք յանձնել նրան աւելի մանրամասն մշակման համար դատական բարենորոգումների մասնաժողովին, որ բաղկացած է բացառապէս իրաւաբաններից։ Մենք դէմ ենք մասնաժողովի աշխատանքները որևէ ժամանակով սահմանափակելուն, որովհետև դատ. բար. մասնաժողովի աշխատանքները մահվան պատիժը վերացնելու նկատմամբ կապված կը լինեն բացառիկ դրութեան նախագիծը քննող մասնաժողովի աշխատանքի հետ։ Ժամանակամիջոցի բացակայութիւնը դատական բարենորոգումների մասնաժողովին հնարաւորութիւն կը տայ մշակել մահվան պատժի հարցը ամբողջապէս և բազմակողմանի կերպով, ինչպէս հարկն է պետական առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի հարցի»։

(Ծափահարութիւն կենտրօնում)։

Շուլգին Զ-դը աջակողմեանների կողմից հնարաւոր է գտնում թերևս մերժել մահվան պատժի վերացման օրինագիծը առանց մասնաժողովին յանձնելու։ «Այդ հարցը մի անագին գրականութիւն և անագին օրէնսդրական գործառնութիւն ունի. նրան կարելի էր քննել ուղղակի Դումայի ընդհանուր ժողովում, եթէ միայն 103 անդամների առաջարկած օրինագիծը կը պարունակէր իր մէջ որոշ անլրջութիւն և մթութիւն և, շատ ներողութիւն եմ խնդրում, որոշ այպանանք Դումայի վրա։ Չէ՞ որ հանգուցեալ Ալէքսանդր III Կայսրի թագաւորութեան ժամանակ և այժմեան Ամենաողորմած թագաւոր Կայսրի թագաւորութեան առաջին տարիներում Ռուսաստանը ժողացաւ թէ ինչ բան է մահվան պատիժը։ Դա միանդամայն հասկանալի է, որովհետև ռուս ժողովրդի մէջ մի տեսակ բնազդային ատելութիւն կայ դէպի մահվան պատիժը և առհասարակ դէպի արդարադատութեան խորութիւնները։ Այդ ատելութիւնը կազմում է մեր ազգային հպարտութիւնը և սփոփանքը, որովհետև նա ամուր պաշտպանում է մեր հաւատը, երբ մենք ասում ենք, թէ անագին ռուսական պետութեան տէր-տիրականը պէտք է ռուս ժողովուրդը լինի, քանի որ նա ողորմած և մեղմ պայազատ կը լինի (ծափահարութիւն աջակողմում)։

«Մինչև դարերի մռայլ տարիներում, երբ Արևմուտքում, սրբազան ինկվիզիցիայի ձեռքով, տաճաճներով կախարդներ և վհուկներ էին սյրում խարոյկների վրա, Ռուսաստանում այն ուղղափառ եկեղեցու ձեռքով, որի մասին միայն տխմարները կարող են խօսել արհամարհանքով, կախարդներին պատժում էին՝ ստիպելով նրանց ծնկաչոք երկրպագել սրբերի առաջ կամ տարածվել գետնի վրա եկեղեցում։

«Դեռ վերջերս ռուս ինտելիգենտ հասարակութիւնը սարսափեց մահվան պատժից։ Իսկ վերջին ժամանակս մենք միթէ չը գտնենք այնպիսի դէպքեր, երբ դատական նիստի դահլիճում ժողովված հասարակութիւնը ծափահարութեամբ ողջունել է մահվան դատավճիռները։ Ցիշեցէք Օստրօվսկիների գործը Կիէվում, Բուսէյկու գործը Վիլնայում։ Չէ՞ որ սա էլ հրէական քարոզիրա ժողովուրդը չէ, որ աղաղակում էր՝ «ի խաչ հան զդա». դա ռուս բարեսիրտ, սովորական ամբոխն է և լեհական ամբոխը։ Հենց այդպիսի դէպք կանգնած է երկու դարագլուխների սահմանում, որոնք արտայայտում են ռուսական ժողովրդի բոլորովին տարբեր հոգեբանական վերաբերմունքը դէպի մահվան պատիժը։ Մենք, աջակողմեանները, այդ սահմանը համարում ենք կազմակերպված և միացած հրէական «Բունդին» անկազմակերպված և անմիացած Ռուսաստանի դէմ, իսկ դուք, պարոններ, նրան անուանում էք՝ ազատագրական շարժում։ (Բացագանչութիւններ՝ «բրաւօ». ծափահարութիւն աջակողմում և մասամբ էլ կենտրօնում. ձայներ՝ «Իսկ կազմակերպված ջարդերը»։ Հէնց այդ ջարդերը ցոյց տուին, որ Ռուսաստանը կազմակերպված և միացած չէ, ապա թէ ոչ իսկական մեղաւորները չէին ծլվի արտասանման, ջարդերը չէին վերջանայ միայն անմեղապարտ «ջհուդների կոտորածով»...

Պուրիշկևիչը տեղից. «Միլիւկօվն էլ կը ճօճվէր կախաղանի վրա»։ (Աղմուկ. Նախագահը խնդրում է հարցին սուր կերպարանք չը տալ)։

Շուլգինը շարունակում է. «Մեծ մոլորութիւն է կարծել, իբր ժամանակակից անվերջ ժամապատիժները կառավարութեան գործ է։ Եթէ կառավարութիւնը դադարէ պատժելուց, մենք ոտք կը դնէինք այնպիսի ինքնադատաստանների դարագլուխ, որոնց առաջ կը ժողացվէին Ամերիկայի նեգրերի Լինչի դատաստան կտրելու գործողութիւնները (ծափահարութիւն)։ Ռուսական ժողովուրդը նման է պտուտակի. քանի նրան չեն լարում, նա թւում է հանգիստ, բարեհոգի. բայց վայ նրան, ով նրան կը լարէ։ Այդ պտուտակը շրջելիս շպրտում է ամեն բան, ինչ որ դիմադրում է իրան (ծափահարութիւն)։

«Մինչև որ հրէական յեղափոխութիւնը և մութ տարրերը, որոնց նա բարձրացրել է յատակից, չեն զսպվի և խոնարհաբար նեղողութիւն չեն խնդրի, ռուս ժողովուրդը չի դադարի մահվան պատիժներ տալուց. նա նրանց կը խղճայ միայն մեղայ գալուց յետոյ, կը մեղքանայ, ինչպէս մեղքանում է մոխրագոյն շորեր հագած այն ապերջանիկ բանտարկեալներին, որոնց մենք տեսնում ենք փողոցում (ծափահարութիւն)։

«Մահվան պատժի վերացման օրինագծի պատմութիւնը այս է. նա ներկայացվեց առաջին Դումային 1906 թ. յունիսի 19-ին։ Նա միաձայն խօսեց յօգուտ վերացման։ Մեծ երեսպաշտութիւն պատմութիւնը չը գիտէ։ Այն ժողովը, որը եթէ չարձակվէր, գլխատելու մեքենաներ կը դնէր ամեն մի տան մէջ, որ ահեց գիակների վրա, որ շաղախված էր արիւնով, որը հենց սկզբում պահանջ դրեց լիակատար ամնիստիա տալ ազատութեան բոլոր մարտիկներին, այսինքն մարդասպաններին, որ աղաղակում էր՝ «Ցեղափոխութեան 10,000 սպանվածները քիչ են»,—այդ ժողովը ձայն տուեց յօգուտ մահվան պատժի վերացման։ («Հ. Դ.»)

(Կը շարունակվի)

ԿՈՂԲԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՃԻՒՂԸ

I

Կովկասի ազգաբնակութեան դժբաղդութեան ու մտնտեսական յետամնացութեան ամենագլխաւոր պատճառը պէտք է որոնել հաղորդակցութեան յարմար ճանապարհների բացակայութեան մէջ։

Չը նայելով սակաւահողութեան ընդհանուր պայմաններին, Արաքսի հովտի ազգաբնակութիւնը անհամեմատ աւելի բարեկեցիկ վիճակ կունենար այսօր, եթէ որ հնարաւորութիւն ու յարմարութիւն ունենար, առանց խոշոր ծախքերի, արտահանել իր ստացած բերքերը մօտիկ շուկաներ։

Նոյնը կարող էինք ասել լեռնոտ Ղարաբաղի մասին, որի ժողովուրդը այսօր չէ ապրում, այլ քարշ է տալիս իր ողորմելի գոյութիւնը։

Մինչդեռ, եթէ շահագործվէին, արդիւնաբերվէին տեղական բնական հարստութիւնները, արտահանվէին գիւղացու թէկուզ արդի մտտեսութիւնից ստացվող սուղ արտադրութիւնները, դրութիւնը բոլորովին այլ կերպ կը լինէր։

Սակայն, ցաւը նրանումն է, որ անհնարին է արդիւնաբերական ոյժերը ոտքի հանել շնորհիւ հաղորդակցութեան գծերի բացակայութեան։

Անդրկովկասեան երկաթուղու գլխաւոր գիծը Երևանեան գծի հետ միացնելը որքան մեծ նշանակութիւն ունի տնտեսական տեսակէտից ամբողջ Ղարաբաղի ազգաբնակութեան համար, նոյնքան կարևոր է նա նաև ընդհանուր շահերի տեսակէտից։

Այդ նշանակութիւնը չեն ժխտում կառավարական շրջաններում, սակայն չը ժխտելով հանդերձ չեն էլ իրագործում։

Կախետիայում երկաթուղային գիծ անցկացնելու խնդիրը այսօր էլ գտնվում է նոյն դրութեան մէջ, ինչ որ թերևս մի քանի տարի առաջ էր, թէև վերջերս ջանքեր են գործադրում կառուցումն աջողեցնելու։

Հարկ չենք տեսնում գնահատութեան ենթարկելու այդ ձգձգումների շարժառիթները. կրիայի քայլերով ընթացող բիւրօկրատական մեխանիզմի մէջ հազար ու մի աննկատելի խոչընդոտներ կան, որոնց մէջ պակաս դեր չէ խաղում չինովնիկական բարեհայեցողութիւնը։

Հասարակական ոյժերի ու կողմակի նախաձեռնողների դիմումները այդ ուղղութեամբ, գոնէ մինչև վերջին տարիներս զարնվելով այդ խոչընդոտներին ու բարեհայեցողութիւններին՝ փշրվել ու մնացել են անհետևանք։

Այդպիսի դիմումներից մէկն էլ Կողբի երկաթուղային ճիւղի խնդիրն է, որը զարթեցրել էր լեռնային իշխանութիւնը սրանից 10 տարի առաջ՝ ըմբռնելով նրա ընդհանուր պետական և արդիւնաբերական նշանակութիւնը։ Եւ, իրաւ, այդ ճիւղը ոչ միայն պիտի ծառայէր Կողբի աղահանքի արտահանութեան, ոչ միայն Կաղզուանի ամբողջ շրջանի ազգաբնակութեան շահերին, այլ և պետութեան ռազմական նպատակներին։

Բայց եթէ նոյնիսկ նայելու լինենք խնդրին զուտ աղահանքի արտահանութեան շահերի տեսակէտից, դարձեալ նրա կառուցումը անյետաձգելի պահանջ պիտի համարենք։

Աղը ժողովրդական տնտեսութեան մէջ առաջնակարգ անհրաժեշտութեան մթերքներից մէկն է կազմում. միմիայն Անդրկովկասի ազգաբնակութիւնը գործ է ածում տարեկան ոչ պակաս քան 10 միլիոն պուդ աղ։ Եթէ աջողվէր արտահանութեան գործը դիւրացնելով արդիւնաբերութիւնը զարգացնել, օգուտը ակներև է թէ ազգաբնակութեան և թէ պետութեան համար։

Կովկասի արտահանութեան մէջ, ինչպէս յայտնի է, այժմ առաջնակարգ տեղ է գրաւում նաւթը և ապա մարգանեցը, մասամբ և պղինձը, իսկ եթէ Կողբի երկաթուղային ճիւղը շուտով կառուցվի, պակաս տեղ չի գրաւի նաև աղի արտահանութիւնը, որի քանակը, ինժեներ Մարգուլիէսի ուսումնասիրութեամբ, մինիմում հասնում է 31,500 միլիոն պուդի։

Իր յատկութեամբ Կողբի աղը ամենալաւն է (պարունակում է 98 և 4½ տոկոս մաքուր խլորանատր) և գլխաւոր շուկաներում գերազանցող տեղ կարող էր գրաւել, մինչդեռ, զրկված լինելով արտահանութեան գծից, ինչպէս նա (Կողբինը), նոյնպէս և Կաղզուանինն ու Նախիջևանինը գործ է ածվում գլխաւորապէս Արաքսի հովտում. գլխաւոր շուկաներում մրցութեան դիմանալ նրանք չեն կարող շնորհիւ այն հանգամանքի, որ նրանց արտահանութիւնը թանգ է նստում։

Կողբի երկաթուղային գիծը կառուցանելուց յետոյ անշուշտ նա կաղզի շուկաների գների վրա և ազգաբնակութեանը հնարաւորութիւն կը տայ աւելի էժան գնով գործածութեան համար ձեռք բերել լաւ յատկութեան աղ, քան Ռուսաստանի խորքերից բերվող, գլխաւորապէս, Բախմուտի աղը, որ այսօր գործածութեան մէջ է Կովկասի գլխաւոր շուկաներում։

Աշխատակից

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Այս յունվարի 31-ին Արխիստական ընկերութեան դահլիճներում տեղի պիտի ունենայ յիշատակված երեկոյթը։ Դիմակաւոր պարահանդէս և այլ բարձր գեղարուեստական պարեր՝ օպերային նուագածութեան դաշնակցութեամբ, և նաև երեկոյթներին սովորական կերպակերպ զբօսանքներ։

Ընկերութիւնը եկամտային ուրիշ աղբիւրների վրա յոյս չէ դնում։ Հասարակութիւնը դեռ ընտելացած չէ ընկերութեան նպատակին։ Անդամների թիւը խիստ սահմանափակ է, մի նեղ շրջան աւելի բանագէտ մարդկանց. ոչ աւելի։ Այսպիսի ընկերութիւն բարձրակիրթ երկիրներում իսկ առանց նպաստի չէ գործում։ Մեզանում մեր միւս հիմնարկութիւնները կարող են նրան օգնութեան գալ. բայց և այդ տակաւին չը կայ, բացի Պետերբուրգի հայոց եկեղ. խորհրդից։

Եւ սակայն ընկերութեան գոյութիւնը մի անժխտելի պահանջ է, առ այժմ հասկանալի է միայն նրանց համար, որոնք կարողութիւն ունեն լայն ըմբռնելու սա մտքի խորութիւնը՝ թէ աւագի վրա տուն չէ շինվում։

Ամենայն մի գիտակից ընտանիք շատ բնական զգացումով պարծում և խրախուսվում է իր տոհմական անցեալով. և մի գիտակից ընտանիք, որ իր տոհմական անցեալում նկատում է խաւար կէտեր և եպերելի կողմեր, եռում է և ամենայն ջանք գործ դնում իր տոհմային նշանի վրայից սրբել այն նսեմ կէտերը։ Երկու դէպքում էլ անցեալի քաջիկ գիտութիւնը անհրաժեշտ է։

Անցեալը պրպտել և ճշգրիտ նկարագրով վերակենդանացնելը, վերակենցաղել մի ազգ իր լուսաւոր և նսեմ գծերով, ոչ միայն բանասիրական հետաքրքրութիւնը՝ այլ ժանաւանդ վերոյիշեալ բնական զգացմունքները յագեցնելու մտքով, դա ազգագրութեան դիտումներից կարևորն է։

Մեր անցեալի պատմիչները, որոնք ջանդիր են եղել քաղաքական անցքերը ամփոփել իրանց երկերի մէջ, անփոյթ են եղել՝ կամ բարեբաստիկ օրերի վայելքը այն չափով չեն ունեցել, որ ժամանակ ու սիրտ ունենային՝ ազգի նաև ներքին կենցաղը իր բոլոր երևոյթներով գրի առնելու։

Բայց մենք ունենք նշխարներ, մեր խորտակված հին ու հնագոյն նաւերից բեկորներ, և մի ժողովուրդ՝ նախնական ուսանդութիւնների կենդանի շտեմարանը և ապրած ազգի տակաւին ապրող մացորդը։

Հետախուզելով այդ նշխարները, այդ բեկորները, այդ մացորդը՝ իր շնչի բոլոր տուբևաի մէջ, վերակենդանացուցիչ միտքը կը բանայ վարագոյրը մի անցեալի ամբողջութեան վրա։

Փառահեղ տեսարան, թէև շատ էլ նսեմ կէտեր երևան նրա մէջ։

Գիտութեան վհուկը՝—հետախոյզ միտքը և վերակենցաղող ոգին՝—այդ է խնդրելին, և նրան մնունդ ու հիւթ տալու և նրան ծառայելու կոչված է Ազգագրական Ընկերութիւնը։

Գնացէք սրա ցայգահանդէսը։

Ա. Մ. Եղեկեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բաթում, 25 յունվարի

Այսօր տեղիս ս. Քրիստի եկեղեցում կայացաւ ծխ. ընդհ. ժողով։ Նախագահ հ. Մելեան բաց արեց ժողովը, ապա քարտուղարը կարդաց անցեալ ժողովի արձանագրութիւնը, որ անփոփոխ ընդունվեց և վաւերացվեց ծխականների ստորագրութեամբ։ Սրանից յետոյ հայր նախագահը առաջարկեց ժողովին ընտրել մի այլ նախագահ. ինքը յայտնեց, որ ուզում է ծուխ թէ՞ ոռճիկ լինելու խնդրի, իբրև սկզբունք, քննադատութեան ժամանակ լինել խօսող, այլ ոչ ժողովի նախագահող։ Նախագահ ընտրվեց բժ. Ն. Մելիք-Մուրադեան։ Ժողովը սկսվեց ժամը 11½-ից, տեւեց մինչև 3½-ը։ Եւ Բաթումի ծխական ժողովը արդարև ցոյց տուեց իր «հասունութիւնը և իմաստութիւնը»։ Ժողովականներից գրեթէ ոչ ոք քաջութիւն չունեցաւ ոռճիկի սիստեմը բացարձակապէս փաստարանելու։ Նոյնիսկ «ծխի» սիստեմի յայտնի կուսակիցները իրանց անբովանդակ ճառերը սկսում էին նախապէս խոստովանելով «ոռճկի» սիստեմի «ի հարկէ» լաւութիւնը, յետոյ էին առաջ քաշում իրանց «ծխի» պաշտպանութիւնը Բաթումի հայ հասարակութեան, ներկայ իբր տասս հասարակութեան համար։ Արդէն՝ «ոռճիկը ի հարկէ լաւ է» առաջաբանը ինքնին հերքումն էր իրանց բոլոր առարկութիւններին։ Ց. Մեղաւորեանի, Ա. Յակոբեանի, Յ. Ղազարեանի, հ. Մելեանի փաստաբանական ճառերից յետոյ, պարզ էր, որ ժողովը ի զուր ժամավաճառ չը պիտի լինէր մնացածներին լսելու, եթէ այդ մնացածները քիչ շատ «լաւ» սկզբունքի արժէքը ճանաչելու և գնահատելու շնորհի տէր մարդիկ լինէին։ Բայց և այսպէս թէ այնպէս, ժողովը տուեց իր արժանաւոր վճիռը։ «Ծխի» կուսակիցները քաջութիւն չունեցան մինչև իսկ ժողովին որևիցէ բանաձև առաջարկելու։ Ժողովը, ի նկատի ունենալով որ քահանայական եկամուտները միացած կրօնաւորական ոռճիկների հետ ոչ միայն լրացնում են երկու քահանայի ոռճիկները, այլ և տարեկան 4—5 հարիւր ռուբլի էլ աւելանում է, որոշեց այդ աւելացածները տնտեսել քահանաների ապագայի ապահովութեան համար։ Եւ որպէսզի այս որոշումը ճշտութեամբ ի կատար ածվի, վճռվեց ծխական հոգաբարձութիւն ընտրել։ Սրանով վերջացաւ նիստը. ուրեմն եկող նիստում կը զբաղվին ծխական ժողովի կողմից կազմված նախահաշուի քննութեամբ և հոգաբարձութեան ընտրութեամբ։ Բաթումի հայ հասարակութիւնը արդէն ըմբռնել է ոռճկի սիստեմի բացարձակ առաւելութիւնը։ Որոգայթները այլևս չեն կարող տապալել։

Ծխական ժողովի մէջ եղան բացարձակ առաջարկութիւններ, որ տարեկան 1200 ռ. ոռճիկը շատ է մի քահանայի համար, երբ նա պէտք է իր ամբողջ գործունէութիւնը կայացնի մեռելթաղելու, պսակ օրհնելու և մկրտութիւններ անելու մէջ և երբ դրա համար տարեկան 5—600 ռուբլով խնդրող և բաւականացող քահանաներ կան։

Պէտք է նկատել, որ ժողովականների մէջ կան մի քանի աչքի ընկնող պարոններ, որոնց համար ոչ նախագահի զանգը, ոչ խնդիրը, ոչ նախազգուշացնելը և ոչ ժողովի վեհութիւնը և տեղը չեն ունենում իրանց ազդեցութիւնը։ Ե՞րբ պէտք է սովորեն մարդիկ իրանք իրանց պահելու վայելուչ ձևերն ու պայմանները։

***

Երևան, 25 յունվարի

Այսօր ս. Սարգիս եկեղեցում ծխ. ժողով էր նշանակված՝ ընտրելու նոր երէցփոխ և մի պատգամաւոր Երևանի փոխանորդական ընտրութեանը մասնակցելու փետր. 1-ին ամբողջ թեմից եկած բոլոր պատգամաւորների ժողովում։ Գործակալը ժողովը բաց արեց և առաջարկեց ժողովականներին՝ ընտրել իրանց միջից նախագահ և քարտուղար։ Ընտրվեցին նախագահ Կ. Տէր-Զաքարեանց, իսկ քարտուղար՝ Ս. սարկ. Աբրահամեանց։ Ժողովը նախ հետաքրքրվեց երէցփոխ Յ. Սողոմոնեանցի հաշիւներով և երբ տեսաւ, որ կանոնաւոր հաշիւներ է պահել և իսկապէս արժանաւոր երէցփոխ է եղել, յայտնեց նրան իր խորին շնորհակալութիւնը և վերընտրեց կրկին։

Ապա կարդացվեց կաթողիկ. տեղապահ Սուրէնեան արքեպիսկոպոսի ուղարկած հրահանգը, որի համաձայն իւրաքանչիւր քահանայի ծուխ պէտք է մի պատգամաւոր ընտրէր։ Ժողովականների հարցին, թէ որ կանոնադրութեան վրա է հիմնվում այդ հրահանգը, գործակալը պատասխանեց, որ «մեզ էլ յայտնի չէ այդ. մենք էլ առաջնորդվում ենք տեղապահի հրահանգի համաձայն»։ Թէ տեղապահը որտեղից է վերցրել այդ հրահանգը, դա հանելուկ է մնում մեզ համար։

Մի հարց, որ երկար ծեծվեց, դա մի քահանայի տեղափոխութիւնն էր այս եկեղեցուց մի ուրիշը. այդ քահանայի ծխականները բաժանվել էին երկու մասի. մի մասը մնացել էր ս. Սարգիս եկեղեցում, միւս մասը քահանայի հետ տեղափոխվել էր մի ուրիշ եկեղեցի։ Այս բանի համար որոշվեց ընտրել երկու պատգամաւոր, որոնցից շատ ձայն ստացողը համարվելու է օրինաւոր ընտրված պատգամաւոր, իսկ միւսը թեկնածու։ Վերջինիս մասին պէտք է առաջարկվի փետրվարի մէկին գաւառից եկած պատգամաւորների ժողովին, եթէ ժողովը գտնի ժողովականների այդ ընտրածին կանոնաւոր, կարող է ընդունել իր մէջ և ձայնի իրաւունք տալ. իսկ հակառակ դէպքում ոչ։ Զը ժառանգ ասելու, որ տեղափոխված քահանայի հետ գնացած ծխականները ընտրել են իրանց կողմից պատգամաւոր, որն ընդունվել է նոյն եկեղեցու ծխականներից։ Պատգամաւոր ընտրելու համար քուէարկութիւն կատարվեց, որի արդիւնքը եղաւ՝ Գ. Աղազադեանցի ընտրութիւնը իբրև պատգամաւոր, իսկ Ս. Շելկոշնիկեանցինը՝ իբրև թեկնածու։

Քաղաքիս միւս եկեղեցիներում ընտրվել են հետեւեալ պատգամաւորները. 1) Ս. Պօղոս-Պետրոս—Գ. Տէր-Խաչատրեանց, Տ. Տէր-Յակոբեան, Գ. Անտօնեան և Յ. Նազարէթեան։ 2) Ս. Կաթուղիկէ—Լ. Յարութիւնեան և Տ. Յովհաննիսեան։ 3) Ս. Լուսաւորիչ—Դ. Պապով և Պ. Յովհաննիսեան։ 4) Ս. Յովհաննէս—Մ. Աթանասեան և Մ. Տէր-Սահակեան։

Մնացած եկեղեցիներում ընտրութիւնը յետաձգվել է ամսիս 29-ին՝ ժողովականների քիչ լինելու պատճառով։

Գ. Աղազադեան

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

«Մշակի» կողմից պ. Յ. Խոջամիրեանի արտասանած ճառը հետեւեալն է.

«Ձեզ շատ լաւ յայտնի էին բոլոր այն զրկանքները, որ տարել և տանում էին մեր հին և նոր, ազնիւ ու տոկուն գործիչները։

Դուք քաջ գիտակ էիք, թէ որպիսի անընկճելի քաջութիւն էր պէտք շրջապատող արհամարհանքի և նախապաշարումների դէմ ելնող մարտնչող անձին, մանաւանդ կինմարդուն, որ գործիչ մշակի դերը պիտի ստանձնէր։

Այո, շատ խոստացող և ժպտող յոյսերը չէին որ ձեզ գործելու հրաւիրեցին։ Այն էլ 35 տարի առաջ, մեր մէջ, ուր ներկայումս էլ ծափերը շատ շուտ են անցնում, իսկ տառապանքները տարիներ տևում, մինչև իսկ գերեզման հասցնում։

Եւ այսպէս՝ դուք վարգեր քաղելու յոյսերով չէր որ երեկան տիրող մթութեան մէջ մուտք գործեցիք վաղ մեր փշալից, անխնամ այգին։

Սակայն դուք կարող տոնել դժուարութիւնների առաջ չէիք կարող։

Որովհետև ձեր անդիմադրելի դրդիչ ու մղիչ ոյժը ձեր այն կոչումն էր, որ ընտրեցին անզուսպ պահանջէր զգում դէպի վեր, դէպի գեղեցիկը սլանալու, դէպի մի զգայուն և գիտող աշխարհ գրաւելու։

Ձեր իւրաքանչիւր յաջող թռիչքը գեղարուեստական կրթիչ այդ վայրում, որին մենք թատրոնական բեմ ենք անուանում, մեզ մեր վշտերի մէջ քաղցր մոռացումն պարգևելով, մոռացնում էր փշերի մէջ և ձեր ստացած վէրքերն ու կրած ցաւերը։ Եւ գեղեցկի օգտին ձեր մղած սիրուն կռիւ դաշտում, որքան էլ ձեր բնածին կոչումը իր տարած բարոյական յաղթանակներով քաջալերված, ոգեորված և գոհ էր, նոյնքան էլ դուք որպէս չարչարվող, վաստակաւոր մշակ, պէտք էիք զգում ձեր յոգնավաստակ անձի ապահով անդորրութեան և կազդուրիչ ոյժերի։ Դուք լռում, բայց այդ մենք տեսնում էինք։

Ուստի թոյլ տուէք «Մշակի» խմբագրութեան անունից՝ ձեր 35-ամեայ տարած բարոյական բեղմնաւոր յաղթանակները շնորհաւորել և միաժամանակ ոյժեր կազդուրող աջողութիւններ ցանկանալ գեղարուեստի վաստակաւոր փայլուն մշակին։

Կեցցէ՛ կոչման ծառայող վաստակաւորը և նրա գիտակից հասարակական պարտաճանաչութիւնը»։

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԵՐ

Վլադիկավկազի կայարանում կողոպտման գործի վերաբերեալ լրագիրներում երևում են այս նորութիւնները։

Յունվարի 29-ին, երբ սկսեցին խուզարկութիւններ կատարել, պատահմամբ քաղաքի եռևում մի դատարկ տեղում գտնվեց այն կոտրված երկաթէ դրամարկղը, որ իրանց հետ տարել էին աւազակները։ Նրա մէջ գտնվեցին միայն փողերի հաշիւները։ Միւս օրը Վլադիկավկազում ձերբակալվեցին 4 ինդուշներ։ Թէև նրանց դէմ բացարձակ ապացոյցներ չը կան, բացի նրանից, որ նրանց մօտ գտնվեցին խոշոր գումարներ, բայց հարցաքննութեան ժամանակ նրանք իրանց ցուցմունքերը խառնեցին։

Երևաց, որ ձերբակալվածներից երկուսը վլադիկավկազցիներ են, միւսները մօտակայ գիւղերից. նրանց տարան կայարանի ծառաների մօտ։

Ծառայ Կինդիան, շվեյցար Վիշնէվսկին և կայարանի կառավարչի օգնական Գլէբօվը հարցաքննութեան ժամանակ յայտնեցին, որ չարագործները, դատելով խօսելուց, ինգուշներ էին, բայց ճանաչել նրանց չեն կարողանում, որովհետև ամբողջ ժամանակ չարագործները կապել էին առաջին երկուսի աչքերը, իսկ վերջինը շատ վախեցաւ. բացի դրանից չարագործները դիմափոխված էին։

Մինչև օրս խուզարկութիւնները շարունակվում են այն տեղերում, ուր երկաթէ դրամարկղը գտնվեց, նաև այն գիւղերում, որտեղից երկու բռնվածներն են։

Կայարանի վարչութեանը յայտնի են մի քանի թղթադրամների համարները։

ՅՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Ֆինանսների մինիստր պ. Կոկովցեվը օրէնքով սահմանած ժամանակամիջոցին մոցնելով Պետական Դուման և Խորհուրդը 1909 թւի պետական բիւջէն ի հաստատութիւն՝ զեկուցել էր, որ տարվայ լինելիք արտակարգ ծախսերը ծածկելու համար պակասում է 152 միլիոն ռուբլի (ճիշտը՝ 152,818,254 ռ.), որը կարող է ստացվել միայն նոր փոխառութիւն կնքելով։ Բայց քանի որ 1909 թւի մայիսին լրանում է 1904 թւի պատերազմական 5 %-ական պարտքի հատուցման ժամանակամիջոցը և այդ պարտքն հաւասար է 8 հարիւր միլիոն ֆրանկի կամ շուրջ 3 հարիւր միլիոն ռուբլու, ապա ուրեմն նոր փոխառութեան գումարը բարձրանում է կլոր թւով մինչև 450 միլիոն ռուբլու։ Եւ ֆինանսների պ. մինիստրը թոյլատրութիւն էր խնդրում Դումայից և Խորհրդից կնքել մի արտաքին փոխառութիւն, որից ստացվի նաղդ (զուտ) 450 միլիոն ռուբլի։

Հոկտեմբերեականների Դուման, միշտ վախենալով որ իցէ թէ իրան անլօգական համարեն, իսկոյն ընդառաջ եկաւ պ. մինիստրի ցանկութեան։ Նա դեռ չը քննած բիւջէն ոչ միայն Դումայի պլէնար (հանդիսաւոր) նիստերում, այլ անգամ բիւջետային մասնաժողովում, ուրեմն իր, Դումայի, համար չը պարզաբանած լինելով, թէ իրօք պակասը (դէֆիցիտը) հաւասար կը լինի 152 միլիոնի, կամ թէ աւել թէ պակաս՝ ընդունեց անփոփոխ պ. մինիստրի թեածը։ Առաւել՝ նա չաշխատեց հակառակ օպոզիցիայի թախանձանքին (պ. Մ. Աշեմեանի) մի քիչ գոնէ կանոնաւորել կնքվելի փոխառութեան պայմանները այն մտքով, որ որոշի ոչ թէ փոխառութիւնից մաքրվելիք գումարը, այլ նրա փոխառութեան անուանական (նոմինալ, нарицательный) գումարը։ Դա կը չափաւորէր փոխառութիւնը վերցնող բանկիրների ախորժակը և նոյնիսկ կուժեղացնէր ֆինանսների մինիստրի պօզիցիան (դիրքը) բանակցութեան ժամանակ և այդ որոշումը բնաւ ընդդէմ չէր լինի հիմնական օրէնքների 76-դ յօդուածին, որ փոխառութիւն կնքելու ժամանակը և պայմանները թողնում է Բարձրագոյն կարգադրութեան։ *)

Եւ ահա թէ ինչ պայմաններում կայացաւ այս նոր փոխառութիւնը, որի անուանական գումարը հաւասար է մի միլիարդ չորս հարիւր միլիոն ֆրանկի կամ ռուսական դրամով 525 միլիոն ռուբլու՝ տարեկան 4½ տոկոսով։ Ի՞նչքան է ապա գանձվում այս գումարից. ոչ աւել քան 449 միլիոն ռուբլի։ Հապա ո՞ւր մնացին 76 միլիոն ռուբլին (525 միլիոնից հանած 449 միլիոնը)։ Ահա ձեզ հաշիւը։

Ամեն մի 100 ֆրանկանոց թղթին բաժանորդագրութիւն է բացված 89¼ ֆրանկ և միջնորդ բանկիրները ստանում են 3¾ ֆրանկ վարձատրութիւն (ըստ արտասահմանեան թերթերի, որ արտատպեցին մայրաքաղաքի թերթերը, առանց միներտրութեան բողոքի)։ Ուրեմն մինչև որ փոխառութեան 100 ֆրանկը մտնի մեր պետական գանձարանը, նա հալվելով դառնալու է 85 ու կէս ֆրանկ։ Իսկ մի միլիարդ չորս հարիւր միլիոն ֆրանկը—525 միլիոն ռուբլին—կը փոքրանայ մինչև մի միլիարդ 197 միլիոն ֆրանկ, կամ մօտ 449 միլիոն ռուբլի... Դեռ էլ պակաս, որովհետև նոր փոխառութիւնը որպէսզի շրջանառութիւն ունենայ Պարիզի բօրսայում, պիտի ենթարկվի բաւական խոշոր տուրքի։

Այս նոր վիթխարի փոխառութիւնը ամբողջովին գրեթէ վերցրին մեր դաշնակից Ֆրանսիացիք. նրանց բաժին ընկաւ մէկ միլիարդ 220 միլիոն ֆրանկ, մնացածը զետեղվեց Անգլիայում (150 միլ. ֆր.) և Հոլանդիայում (30 միլ. ֆր.)։

Ֆրանսիական շուկան մեծ ոգեորութեամբ ընդունեց իտալի փոխառութիւնը, որը, ինչպէս տեսնում էք, միայն անուանական է 4½ տոկոսանի, իսկ իրապէս տալիս է 5-ից մի քիչ էլ աւելի (89-ին տրվում է 4½ տոկոս, 100-ին կը բռնի 5 1/18)։ Եւ բաժանորդագրութեան փայլուն ելքը ապացոյց էր, որ կարելի կը լիներ փոխառութիւնը կնքել մեզ համար աւելի նպաստաւոր պայմանների մէջ, եթէ միայն հոկտեմբերեան Դուման մի քիչ շրջահայեաց լինէր։

Նոր փոխառութիւնը մեր պետական բիւդջէն ծանրացնելու է տարեկան գրեթէ 9 միլիոն ռուբլի աւել ծախսով, քանի որ նոր փոխառութեան տոկոսները կտնեն 63 միլիոն ֆրանկ, իսկ շուտկայից հեռացվում են 800 միլիոն 5%-անոց պատերազմական պարտքը 40 միլիոն ֆր. տոկոսով։ Զը հաշված դրամագլխի հանդուցման բաժինը (амортизація капитала) այնպէս որ հանդուցվող պետական պարտքի տարեկան տոկոսիքը այս տարվայ վերջին կը հաւասարվի չորս հարիւր հինգ ու կէս միլիոն ռուբլու... Ընդհանուր պետական պարտքը սրանով անցնում է ինն միլիարդից դէնը (մօտ 9 միլիարդ 75 միլիոն ռուբլի)։ Մենք սովորել ենք մեծ թւերի. խնդրեմ չը մոռանաք, որ Քրիստոսի ծննդից մինչև 1909 թւականը հաշիւ անցել է մէկ միլիարդ րոպէ, իսկ մեր պետական պարտքը անցել է 9 միլիարդից **)...

Պետրոս Զաքարեան

Յ. Գ.—Մայրաքաղաքի թերթերի ասելով, այս տարվայ ընթացքում կայանալու է և մի ներքին փոխառութիւն...։

Նոյնը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Յունվարի 28-ին Կովկասի Փոխարքային և կոմսուհուն ներկայացաւ մի պատգամաւորութիւն տասն մահմեդականներից բաղկացած, գլուխ ունենալով Անդրկովկասի մուֆթիին և շեյխ-ուլ-իսլամի պաշտօնակատարին։ Պատգամաւորութիւնը շնորհակալութիւն արեց մահմեդական ազգաբնակութեան կողմից այն առիթով, որ նոցին պայծառափայլութիւնների միջնորդութեան շնորհիւ տասնևհինգ թոշակներ են տրվել մահմեդականների համար Նիկոլայ I կայսրի իգական ինստիտուտում և ս. Նինայի դպրոցում։

✦ Երէկ թաղեցին հայազգի գեներալ-ինժեներ Թարխան Աղամալովին։ Խոջամիրեանին հանդիսաւոր կերպով։ Թաղմանը ներկայ էր խուռն բազմութիւն ազգաբնակութեան բոլոր դասակարգերից։ Թաղումը կատարվեց գեներալին վայել զինուորական պատիւներով։ Սգահանդէսին հետևում էին երկու վաշտ զօրամաս, վեց թնդանօթ և երկու երաժշտախումբ։

✦ Երէկ, յունվարի 29-ին, կովկասեան շրջանի հոգաբարձուին ներկայացաւ մի յատուկ պատգամաւորութիւն Վերին Ադուլիսի հասարակութեան կողմից խօսելու պրօգիմնազիա հիմնելու ծրագրի մասին։ Վերին Ադուլիսի հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով, որ թէ այդ աւանի և թէ հարևան գիւղերից շատերը գնում են օտար քաղաքներ ուսում ստանալու, այլ և այն, որ Դողթանի շրջանը առհասարակ կրթութեան վերաբերութեամբ աւելի մեծ պահանջ ունի, քան ուրիշ տեղերում, որոշել է բանալ Ադուլիսում պրօգիմնազիա։ Այդ ցանկութիւնը իրագործելու համար նա ընտրել էր իր կողմից լիազօրներ խօսելու Կովկասեան ուսումնարանի շրջանի հոգաբարձուի հետ պ.պ. Մ. Դէորգեանին, բժ. Կ. Ստեփանեանին և Ալ. Քալանթարին։ Պատգամաւորութիւնը ունեցաւ մանրամասն խօսակցութիւն հոգաբարձուի հետ, որը իր կողմից արեց բազմաթիւ նկատողութիւններ դպրոցի տեղի և նպատակների մասին։ Թէ Ադուլիսի և թէ այլ տեղերի դպրոցների մասին յատուկ խորհրդակցութիւններ պէտք է լինեն հոգաբարձուի նախագահութեամբ։

✦ Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակը Պետերբուրգից կարգադրութիւն է ստացել արձակել պաշտօնեներից այն կին ծառայողներին, որոնք կամուսնանան ոչ-պօստային ծառայողների, այլ օտար մարդկանց հետ։

✦ Յունվարի լոյս 29-ի գիշերվանից Թիֆլիսում սկսվեց մի չը տեսնված քամի, որ շարունակվեց միւս օրը ևս։ Քամին մի քանի տեղերում վնասներ է պատճառել։ Թէ այս և թէ նորերս պատահած երկրաշարժը տպէտ ժողովուրդը առհասարակ բացատրում է մի անակնկալ վերահաս դժբաղդութեամբ, որին ժամնվելու է Թիֆլիսի ազգաբնակութիւնը։

✦ Այսօր նշանակված է Կովկասեան իրաւաբանների ընկերութեան ընդհանուր ժողովը։

✦ Թիֆլիսի դումայի ձայնաւոր Ս. Միրզոյեվը արտասահմանում կարողացել է կազմել նոր ձեռնարկութիւն՝ այսպէս կոչվող ռուս-գերմանական լեռնարդիւնաբերական ընկերակցութիւն, որ նպատակ ունի հետազօտել և շահագործել Կովկասի լեռնային հարստութիւնները։ Ընկերակցութեան գլուխ կանգնած է Եւրօպայում յայտնի խոշոր լեռնարդիւնաբերողներից մէկը։ Աշխատանքները սկսվելու են այս տարվայ ապրիլ ամսից։

✦ Թիֆլիսի նահանգական մէջլիսի գրծավար Էֆրօսիաբ-բէկ Աղալարովը պաշտօնից հեռացվում է, որովհետև քննութիւն է սկսված նրա դէմ մի քանի կասկածելի յանցանքների համար։ («Կ.»)

✦ Ինչպէս լսել է «Յ. Օ.» թերթը, Կովկասի Փոխարքայի դիւանատանը ընթացք են տուել վաղուց մոռացութեան մատնված Թիֆլիսի Պուշկինեան գրադարանի նոր շէնք կառուցանելու հարցին։ Շէնքը ներկայումս չէ բաւականացնում ազգաբնակութեան պահանջներին։

✦ Այսօր Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենայ մի ներկայացում Մարիամեան-Յովհաննեան դպրոցի օգտին։

✦ «Վօլգա և Մասա» ֆիրմայի ներկայացուցիչը Թիֆլիսի քաղաքային վարչութեանը առաջարկել է երկու շաբաթվայ ընթացքում էլեքտրական լուսաւորութիւն հաստատել մինչև քաղաքային էլեքտրական կայարանի կառուցումը։

✦ Գօրու գաւառում կազմակերպվել է այգեպէրերի մի ընկերութիւն, որի նպատակն է Թիֆլիսում կազմել մրգերի վաճառք առանց միջնորդ գնողների, որոնք սովորաբար շատ էժան են առնում մրգերը այգեպէրերից և թանգ գներով սպառում են քաղաքիս շուկաներում։ Ընկերութեան մէջ մտնում են 2—3 կալուածատէրեր և 20-ի չափ գիւղացի այգեպէրեր։

✦ Վրիպակ.—«Մշակի» № 20-ի մէջ սպրդել է մի վրիպակ, որը շտապում ենք ուղղել։ Տիկին Սիրանոյշի յօբելեանական երեկոյթին ներկայացվել է ոչ թէ «Թախիծը», այլ «Տօսկա» պիէսան։

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Մօտ ժամանակներս Բագուի «Իտտիհադ» դպրոցում աղօթելու հաւաքված մահմեդականները հանդանակել են իրանց մէջ 600 ռուբլի յօգուտ վնասված ատրպատականցիների։ («Թարաքկի»)

✦ Ժողովրդական դպրոցների տեսուչ Ս. Մ. Գանիէվը ռուս-թուրքական բառարան է կազմում, որի մէջ մտնելու են մօտ 18,000 բառեր։

✦ Դրամաշորթների դէմ մաքառման միջոցներ մշակելու նպատակով քաղաքացիների ժողով հրաւիրելու համար ընտրված մասնաժողովին «Թարաքկի» լրագիրը դիմում է հետևեալ հարցով. ժողովին մասնակցելու են արդեօք միայն հարուստներն ու ազգաբնակութեան բարձր դասակարգի ներկայացուցիչները թէ՞ հրաւիրելու են նաև աղքատ դասակարգի ներկայացուցիչները, որոնք և իրապէս ամեն մի քայլափոխում թալանների ու դրամաշորթութեան զոհեր են հանդիսանում։ Անհրաժեշտ է, որպէսզի այդ միևնոյն մասնաժողովի մէջ մտնեն նաև աղքատների ներկայացուցիչները։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Մոսկվայի քաղաքային դումայի ձայնաւորներ Դ. Ն. Շեպով, Ն. Ի. Աստրով և Ս. Ն. Մամօնտով գրաւոր առաջարկութիւն են արել դումային, որ ժամանակ է պարտեան պայմանները այն մտքով, որ որոշի ոչ թէ փոխառութիւնից մաքրվելիք գումարը, այլ նրա փոխառութեան անուանական (նոմինալ, нарицательный) գումարը։ Դա կը չափաւորէր փոխառութիւնը վերցնող բանկիրների ախորժակը և նոյնիսկ կուժեղացնէր ֆինանսների մինիստրի պօզիցիան (դիրքը) բանակցութեան ժամանակ և այդ որոշումը բնաւ ընդդէմ չէր լինի հիմնական օրէնքների 76-դ յօդուածին, որ փոխառութիւն կնքելու ժամանակը և պայմանները թողնում է Բարձրագոյն կարգադրութեան։ *)

Եւ ահա թէ ինչ պայմաններում կայացաւ այս նոր փոխառութիւնը, որի անուանական գումարը հաւասար է մի միլիարդ չորս հարիւր միլիոն ֆրանկի կամ ռուսական դրամով 525 միլիոն ռուբլու՝ տարեկան 4½ տոկոսով։ Ի՞նչքան է ապա գանձվում այս գումարից. ոչ աւել քան 449 միլիոն ռուբլի։ Հապա ո՞ւր մնացին 76 միլիոն ռուբլին (525 միլիոնից հանած 449 միլիոնը)։ Ահա ձեզ հաշիւը։

Ամեն մի 100 ֆրանկանոց թղթին բաժանորդագրութիւն է բացված 89¼ ֆրանկ և միջնորդ բանկիրները ստանում են 3¾ ֆրանկ վարձատրութիւն (ըստ արտասահմանեան թերթերի, որ արտատպեցին մայրաքաղաքի թերթերը, առանց միներտրութեան բողոքի)։ Ուրեմն մինչև որ փոխառութեան 100 ֆրանկը մտնի մեր պետական գանձարանը, նա հալվելով դառնալու է 85 ու կէս ֆրանկ։ Իսկ մի միլիարդ չորս հարիւր միլիոն ֆրանկը—525 միլիոն ռուբլին—կը փոքրանայ մինչև մի միլիարդ 197 միլիոն ֆրանկ, կամ մօտ 449 միլիոն ռուբլի... Դեռ էլ պակաս, որովհետև նոր փոխառութիւնը որպէսզի շրջանառութիւն ունենայ Պարիզի բօրսայում, պիտի ենթարկվի բաւական խոշոր տուրքի։

Այս նոր վիթխարի փոխառութիւնը ամբողջովին գրեթէ վերցրին մեր դաշնակից Ֆրանսիացիք. նրանց բաժին ընկաւ մէկ միլիարդ 220 միլիոն ֆրանկ, մնացածը զետեղվեց Անգլիայում (150 միլ. ֆր.) և Հոլանդիայում (30 միլ. ֆր.)։

Ֆրանսիական շուկան մեծ ոգեորութեամբ ընդունեց իտալի փոխառութիւնը, որը, ինչպէս տեսնում էք, միայն անուանական է 4½ տոկոսանի, իսկ իրապէս տալիս է 5-ից մի քիչ էլ աւելի (89-ին տրվում է 4½ տոկոս, 100-ին կը բռնի 5 1/18)։ Եւ բաժանորդագրութեան փայլուն ելքը ապացոյց էր, որ կարելի կը լիներ փոխառութիւնը կնքել մեզ համար աւելի նպաստաւոր պայմանների մէջ, եթէ միայն հոկտեմբերեան Դուման մի քիչ շրջահայեաց լինէր։

Նոր փոխառութիւնը մեր պետական բիւդջէն ծանրացնելու է տարեկան գրեթէ 9 միլիոն ռուբլի աւել ծախսով, քանի որ նոր փոխառութեան տոկոսները կտնեն 63 միլիոն ֆրանկ, իսկ շուտկայից հեռացվում են 800 միլիոն 5%-անոց պատերազմական պարտքը 40 միլիոն ֆր. տոկոսով։ Զը հաշված դրամագլխի հանդուցման բաժինը (амортизація капитала) այնպէս որ հանդուցվող պետական պարտքի տարեկան տոկոսիքը այս տարվայ վերջին կը հաւասարվի չորս հարիւր հինգ ու կէս միլիոն ռուբլու... Ընդհանուր պետական պարտքը սրանով անցնում է ինն միլիարդից դէնը (մօտ 9 միլիարդ 75 միլիոն ռուբլի)։ Մենք սովորել ենք մեծ թւերի. խնդրեմ չը մոռանաք, որ Քրիստոսի ծննդից մինչև 1909 թւականը հաշիւ անցել է մէկ միլիարդ րոպէ, իսկ մեր պետական պարտքը անցել է 9 միլիարդից **)...

Պետրոս Զաքարեան

Յ. Գ.—Մայրաքաղաքի թերթերի ասելով, այս տարվայ ընթացքում կայանալու է և մի ներքին փոխառութիւն...։

Նոյնը

*) Պետական Դումայի և Խորհրդի իրաւունքը՝ որոշել փոխառութեան անուանական գումարը չը ժխտեց և պ. Կոկովցեվը, դրական պատասխան տալով իրան դիմող պ. Միհ. Ալ. Ստասիվիչին (Պետական Խորհրդի նիստը 5, դեկտեմբերի 1908 թ.)։

**) Պատեհ առիթին մենք կը տանք մեր պետական պարտքի ընդհանուր տեսութիւնը։ Պ. Զ.

տաղիր ուսում մացնել Մոսկվա քաղաքի մէջ, և պատասխանատուութեան ենթարկել այն ծնողներին, որոնք խուսափում են իրանց զաւակներին դպրոց ուղարկելուց։ Դուման որոշել է այդ առաջարկը յանձնել ֆինանսական և դպրոցական յանձնաժողովներին։

◆ Պետերբուրգից Մոսկվա ուղարկված մասնաժողովը վերաստուգելով Մոսկվայի պօստ-հեռագրական շրջանի գործերը՝ մի զարմանալի գիւտ է արել։ Հեռագրական գծերից մէկի կառուցման բոլոր հաշւապահութիւնը գտել է միանգամայն կանոնաւոր, կապալառուների ներկայացրած հաշիւներն ու դրամական ընկալագրերը գոյութիւն ունեն, սակայն գիծը ինքը չէ գտնվել, որովհետև իրապէս նա գոյութիւն չունի և շինված է եղել թղթի վրա միայն։ («Рѣчь»)

◆ Մոսկվայի քաղաքային բիւրոյի հրատարակած ստատիստիքական տեղեկութիւնների համաձայն, մահացութեան թիւը Մոսկվայում 1908 թիւին բաւականին աւելացել է. մի ամբողջ տարվայ ընթացքում մեռել են 39,694 հոգի, այսինքն նախորդ տարվայ համեմատութեամբ 1,899 հոգի աւելի։

◆ Պարիզից ստացված այն հեռագրի առիթով՝ թէ իբր Իոլլօսին սպանողը ներկայացել է ֆրանսիական կառավարութեանը և խնդրել կալանաւորել իրան ու յանձնել Ռուսաստանին, որպէս զի նա հնարաւորութիւն ունենայ դատարանում այդ սպանութեան մասին մերկացումներ անել, «Рѣчь» լրագիրը յիշատակում է, որ առաջին Պետական Դումայի անդամ Իոլլօսի սպանութիւնը կատարվել էր ռուս ժողովրդի միութեան անդամ Կաղանցեվի դրդմամբ, որի անունը շաղկապված է Հերցենշտէյնի սպանութեան հետ ևս։ Սպանող-յեղափոխական Ֆէօդօրովը, որին Կաղանցեվը խաբելով կատարել էր տուել այդ ոճիրը, իմանալով թէ ում է սպանել, հետաքրքրում է լինում Կաղանցեվին և պատժում նրան։ Այդ ամբողջ պատմութիւնը երևան է հանել ինքը Ֆէօդօրովը, մեղայականով ներկայանալով սոց.-յեղափոխականներին, և վերջիններս էլ յայտարարել են Ֆէօդօրովի ցուցմունքները։ Երբ Ֆէօդօրովը, թագնվելով արտասահմանում, տեղեկանում է, որ Պետերբուրգի նահանգական դատարանում քննութիւն է կատարվում Կաղանցեվի սպանութեան մասին, նա գրաւոր կերպով ուղարկում է քննիչի անունով իր ձեռագրիր մանրամասն ցուցմունքը, պատմելով գործի բոլոր հանգամանքները՝ սկսած Կաղանցեվի հետ առաջին անգամ ծանօթանալուց մինչև նրա սպանվելը Պօրխովիխի մօտերում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Նոր Դպրոց» ամսագիր, 1908 թ. № № 5 և 6, Նոյեմբեր ու դեկտեմբեր։

«Նոր Դպրոց» նոյեմբերեան համարում զետեղված մի շարք հետաքրքրական յօդուածները մեր դպրոցական կեանքի մասին բանում են այն հին վէրքերը, որոնք եթէ շուտափոյթ օգնութիւն չը ստանան, գլխովին վարակելու են առանց այն էլ կազմալոյծ, անսիստեմ և վարչաղուրկ դպրոցական օրգանիզմը։

«Թեմական դպրոցական խորհուրդները», «Աւագ ուսուցչութեան հարցը», «Դպրոցական վիճակագրութեան անհրաժեշտութիւնը», բժշկական հսկողութիւն, մանուկների նեարդայնութիւնը, մինչև իսկ հայոց լեզուի ուղղագրական խնդիրներն կայն կայն,—ահա մի շարք անյետաձգելի կարեւոր հարցեր, որոնց անհրաժեշտութիւնն և նշանակութիւնը ոչ ոք չէ կարող ժխտել։ Մնում է միայն, որ մեր նորընտիր բարձրագոյն հաստատված կաթողիկոսը, երբ ժամանէ Էջմիածին, առաջնակարգ տեղ տալով դպրոցական խնդրին, անմիջապէս ձեռնարկէ ձեռնհաս անձերից մի կենտրոնական դպրոցական վարչական գործադիր մարմնի կազմակերպութեան, որ ամենից առաջ պէտք է ստեղծէ մեր դպրոցների համար մի ուսումնական-վարչական ձև վերջ տալու դպրոցական ներկայ քաոսային դրութեանը, այլապէս այժմեան անորոշութեան մէջ շատ բան կարելի է ասել ու գրել, սակայն ամենը լինելու է ներկայ պայմաններում ձայն բարբառոյ յանապատի...

Ամենից հետաքրքրականն է դեկտեմբերեան համարում մանկավարժ Յ. Տէր-Միրաքեանի յօդուածը՝ «Սարեակ» (մշակված դաս) խորագրով։ Քանի որ յօդուածի նիւթն առնված է գործնական մանկավարժութիւնից, կարևոր ենք համարում մի քանի դիտողութիւններ անել վերոյիշեալ մշակված դասի զուտ գործնական մասի՝ հարց ու պատասխանների վերաբերեալ, մի կողմ թողնելով այն թերութիւնները, որոնք վերաբերում են դասի նիւթի մշակմանը և նրա անսիստեմ դասաւորութեանը։ Պ. Տէր-Միրաքեանը առաջադրում է դասարանին հետևեալը. «Նպատակ։ Այսօր մենք պէտք է աւելի մօտ ծանօթանանք թռչուններից գարնան առաջին կարապետին։ Այս ո՞րն է»։ (երես 39)։

Դասի նպատակը չը պէտք է հաղորդել աշակերտներին հարցական ձևով, որովհետև նպատակը յայտնվում է աշակերտներին ի գիտութիւն, որ և նրանք ի նկատի են առնում և ոչ թէ պատրաստվում պատասխանելու։ Ուրեմն պէտք է լինի այսպէս.—Նը-պատակ. այսօր մենք պէտք է աւելի մօտ ծանօթանանք թռչուններից գարնան առաջին կարապետին։

Աշակերտներին հատ-հատ և ապա խմբովին այդ կրկնել տալուց յետոյ, պէտք է առաջարկել հարցական ձևով՝ որ թռչունն է գարնան առաջին կարապետը։

Նաև անյարմար է «գարնան առաջին կարապետ» դարձուածքը։ Զէ՞ որ չէ կարելի երաշխաւորել, որ այս դէպքում բոլոր աշակերտները կարող են «կարապետ» բառի իմաստը հասկանալ և գիտենալ նրա գործածութիւնը։

Եթէ կան տեղեր, «ուր սարեակները ձմեռն էլ մնում են», էլ ինչու սարեակին պէտք է անուանել «գարնան առաջին կարապետ»։ «Զաղերին ճիճուներ են տալիս», աւելի ճիշտն է՝ ձաղերին ճիճուներով են կերակրում։ «Սարեակը կարող է թութակի պէս բառեր սովորել», աւելի լաւ է ասել՝ թութակի պէս սովոր բառեր արտասանել։

«Մարմինը (խօսքը սարեակի մասին է) ձեռքի երկարութեան է»։ Ո՞ւմ ձեռքի՝ չափահասի՞, անչափահասի՞։ Ձեռքերը զանազան երկարութեան են լինում։ Եւ մի՞թէ ձեռքը կարող է չափի տեղ ծառայել։

«Սարեակի ոտքերը խոշոր են և ուժեղ։ Ինչու՞», «Ինչու՞ սարեակի կուցն էլ երկար է, ուժեղ և սուր» և այլն։ Այսպէս ձևակերպված հարցերը մենք գտնում ենք անյարմար։ Աւելի ևս նպատակայարմար է առաջարկել այս ձևով՝ Ինչպիսի՞ ոտքեր, կուց... և այլն ունի սարեակը։ Երբ աշակերտները կենդանի սարեակի, խրտուիլակի և կամ գունապատ պատկերի վրա դիտողութիւն ու զննութիւն անելուց յետոյ կը պատասխանեն վերը յիշված հարցերին, այն ժամանակ պէտք առաջարկել հետևեալ հարցերը. ինչու՞ սարեակի ոտքերը խոշոր և ուժեղ են, կուցը երկար, ուժեղ սուր և այլն։

Բաւականանալով այսքանով, ցանկանք, որ «Նոր Դպրոցում» մշակված կամ օրինակելի դասերին վերաբերեալ յօդուածներն աւելի ևս մեծ տեղ գրաւէին։ Դասաւանդութեան մէջ միշտ պէտք է գործականին գերակշռող նշանակութիւն տալ։ Ամեն մի դասատու պէտք է իր յիշողութեան մէջ ամուր պահէ Թալմուդի հետևեալ իմաստալից խօսքերը. «Շատ բան սովորեցի ես իմ ուսուցիչներից, աւելի շատ՝ իմ ընկերներից, իսկ ամենից շատ բան սովորեցի իմ աշակերտներից»։

Ա. Նազարէթեան

ՄԱՄՈՒԼ

Յունվարի 25-ին Թիֆլիսում լոյս տեսաւ հայերէն լեզուով մի խումբ գիւղատնտեսների ձեռնարկութեամբ հրատարակվող «Գիւղատնտես» շաբաթաթերթի № 1-ը։ Այն հանգամանքը, որ թերթի հրատարակութեան գործը, ինչպէս խմբագրութիւնն է յայտնում, մի ամբողջ տարով ապահովված է, արդէն և այն վերաբերմունքը, որ ցոյց են տուել մի քանի հաստատութիւններ ու անձինք, ապացոյց է, թէ որպիսի անհրաժեշտութիւն է ներկայացնում մի այդպիսի թերթի գոյութիւնը մեր ժողովրդական կեանքում և թէ ինչպիսի համակրութիւն է գտնում նրա հանդէս գալը հասարակութեան գիտակից ու բանիմաց խաւերում։

Իր առաջին համարով «Գիւղատնտեսը» դնում է ընթերցող հայ հասարակութեան առաջ այն ըմբռնումները, որ նա ունի իր կատարելիք համեստ դերի և նպատակների մասին։

«Գիւղատնտեսը» խորագրով իր խմբագրական յօդուածում նա ասում է.

«Գիւղատնտեսը նպատակ է դրել, ժողովելով իր շուրջը մի կողմից մեր երկրի զանազան մասերում ցրված գիւղատնտեսներին, միւս կողմից հողի և նրա արդիւնքների հետ գործ ունեցող անձանց և ինտելիգենտ ոյժերին, միահամուռ ջանքերով օգնութեան գալ երկրագործութեամբ և գիւղատնտեսութեամբ պարապող մեր ժողովրդին։

Այդ օգնութիւնը թերթը գտնում է նրանում, որ նա

կարողանայ իր էջերից տալ բոլորին հասկանալի լեզուով՝ գիւղատնտեսութեանը և տնտեսական կեանքին վերաբերող խորհուրդներ, անել նրան գործնական ցուցմունքներ, ցոյց տալ հողը մշակելու, հողից և նրա արդիւնքներից օգտվելու նոր, աւելի հեշտ և աւելի արդիւնաւէտ միջոցներ ու ճանապարհներ։

Ընդունելով որ խորհուրդներն ու գրաւոր ցուցմունքները չեն կարող շատ բան տալ ժողովրդին, որ ձեռնարկած գործը աւելի մեծ օգուտ և աջողութիւն կունենար, եթէ խոստացված զեմստվային հաստատութիւնները այժմ մեզանում գոյութիւն ունենային, այնուամենայնիւ նրանք խոստանում են և այն, որ

մեր ժողովրդի համար ամեն մի գործնական խորհուրդ, ամեն մի դէպի կատարելութիւն տանող ցուցմունք կունենայ իր նշանակութիւնը, որովհետև այդ կողմից նա կամ ոչինչ չը գիտէ, իսկ եթէ գիտէ էլ՝ նրա իմացածը շատ թերի է և անկատար։

Ուստի նա երկրի գիւղատնտեսների բարոյական պարտքն է համարում օր առաջ օգնութեան գալ մեր երկրագործ և գիւղատնտես ժողովրդին։

Եւ, ինչպէս երևում է թերթի № 1-ից, այդ մտադրութիւնը ջերմ արձագանք է գտել հայ գիւղատնտեսների շրջանում։

Առաջին համարը խմբագրված է մեծ խնամքով. նրա մէջ մտել են մեր երկրի գիւղատնտեսութեան և տնտեսութեան գլխաւոր ճիւղերի վերաբերեալ մի շարք խնդիրներ՝ անասնապահութեան, կաթնատնտեսութեան, մեղուաբուծութեան, գինեգործութեան, թռչնապահութեան մասին և այլն, որոնք վերաբերում են մեր արդիւյանի հայ գիւղատնտեսների գրչին։

Վերջում, «Հարց և պատասխաններ» վերնագրի տակ, խմբագրութիւնը պատասխանում է իր խորհրդին ու բացատրութիւններն կարօտ անձանց դիմումներին։

Առաջին համարը լաւ տպաւորութիւն է թողնում. թերթի թէ լեզուն և թէ յօդուածները դիւրըմբռնելի են հասարակ ընթերցողներն համար, և այդ տեսակէտից պէտք է յուսալ, որ նա մեծ ընդունելութիւն կը գտնի հայ գիւղացիութեան շրջանում։

Ուրախութեամբ պէտք է նկատենք, որ թերթը հեռու է պահում իրան այնպիսի ընդհանուր խնդիրներից, որոնց մասին աւելի ընդարձակ ու ամփոփ կերպով տեղեկութիւններ են տալիս օրաթերթերը։

«Գիւղատնտեսի» համար բազմաթիւ խնդիրներ կան արձանագրելու մեր ժողովրդի առօրեայ ցաւերից ու հոգսերից, եթէ նա աշխատի լրջօրէն ծանրանալ նրանց պատճառների ուսումնասիրութեան վրա ու տալ նրանց համապատասխան ցուցմունքներ ու խորհուրդներ, դրանով էլ անփոխարինելի ծառայութիւն մատուցած կը լինի։ Այն ուղղութեամբ, որը սկսել է իր առաջին քայլը, նա արդիւնաւոր կը լինի։ Մեզ մնում է աջողութիւն մաղթել և յանձնարարել հայ ընթերցողներին այդ համակրելի ու օգտակար թերթը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 յունվարի

Ես, ստորագրող, Թիւրքիայի Յակոբ Առաքելեանցս, գրեթէ այս ամբողջ տարվայ ընթացքում հիւանդ եմ։ Եւ որովհետև անընդունակ եմ աշխատելու, ուստի տան մէջ ինչ որ կար արժողութիւն ունեցող, բոլորը ծախելով տուի թէ բժշկի, թէ դեղերի և թէ հացի, իսկ այժմս գտնվում եմ ամենախղճալի վիճակի մէջ, այնպէս որ նոյնիսկ ուտելու հաց չունեմ։ Բացի դրանից՝ այժմ կինս էլ, ծննդից նոր ազատված լինելով, մնացել է առանց մի կտոր հացի, նոյնպէս և ծեր մայրս։ Ուստի աղերսանքով դիմում եմ բարի մարդկանց և խնդրում եմ մեր ամբողջ ընտանիքը սովամահութիւնից ազատել ի սէր իրանց սիրելիների։ Հասցէս՝ Анчисхатская ул. д. Дандурова № 17.

Ընթերցողներից շատերը գուցէ առարկեն, թէ ինչու չեմ դիմում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը։ Բայց պիտի ասեմ, որ խնդիրքով դիմեցի այդ հաստատութեանը և խնդրեցի վարչութիւնից, որպէսզի մեզ մի օգնութիւն հասցնի, ստուգելուց յետոյ իմ ասածները և իմ ընտանիքի դրութիւնը։ Խնդրագիրս տալուց 3 օր յետոյ ուղարկեցի պաշտօնական, որպէսզի յիշեալ Ընկերութիւնից մի նպաստ բերի, բայց Ընկերութիւնը մերժել էր, առարկելով թէ փող չը կայ։

Եթէ կ. Հ. «Բարեգործ. Ընկ.» ինձ նման տառապեալներին չէ օգնում, ապա էլ ո՞ւմ պէտք է օգնէ, և եթէ չէ օգնում, ուրեմն հետաքրքրական է իմանալ, թէ խեղճերի օգնելու համար այդքան հազարներով իր ստացած դրամներն ո՞ւր են կորչում և յետոյ էլ առարկում, թէ փող չը կայ։

Յ. Առաքելեան

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՎԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
ԵՐԿՈՒՈՆԵՐԸ՝
Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԴԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ
մասնագէտ միզասեռային, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների
Վերադարձաւ
և առաջվան պէս ընդունում է հիւանդներին ցերեկվայ 1—4 ժամը և երեկոյեան 6—8 ժամը։
Միխայլովսկի պրոսպեկտ, № 38.
(Բէալական դպրոցի հանդէպ), տելէֆոն 663.
(օ. մ.) 11. 10—10

ԲԺԻՇԿ
Գ. Է. Խօջափարուխեան
Օդեսայի համալսարանի կլինիկայի նախկին օրդինատոր։
Մասնագիտութիւնը՝ սիֆիլիս, միզասեռական և կաշու հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ առաւօտեան ժամը 9—12 և 5—7½ երեկոյեան։
Սօլոլակ, Բէբուտովսկայա փ. № 29.
(օ. մ.) 25—24

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Սիֆիլիս, վեներական, միզասեռական եւ մորթու ցաւեր
Ընդունելութիւն՝ ամեն օր 12—2 ժ. ցեր. 5—7 ժ. երեկ
Սօլոլակ, Բէչհրութեան փողոց № 33.
(օ. մ.) 100—43

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը՝ 12—1 առաւօտեան 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—89

Աւարտելով ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ հաշւապահական կուրսերը՝ ցանկանում եմ ունենալ հաշւապահի կամ գանձապահուհու պաշտօն։ Կարող եմ պարապել և բէմինգտօնի վրա։
Հասցէս՝ «Մշակի» խմբագրատուն։
(չ. ու.) 86 2—2

Լոյս տեսաւ
ԿԼԻՑՆԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ
48 նկարով, թարգմ. Ա. Մխիթարեանի
Հրատ. Գ. Գալստեանի
Գինն է 50 կ., պօստի ծախքով 65 կ.։ Գաւառացիները կարող են դրկել և պօստի մարկաներ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
75. 3—3

ԿԱՐՍ քաղաքում
յունվար ամսից սկսել է գործել
ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Մ. Ֆ. ԶԱԻԱԼԻՇԻՆԱ
Կուբինսկայա և Միխայլովսկայա փող. անկիւն, տուն Գօնելի, բակում։
(օ. մ.) 44. 10—6

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Արտասահման մեկնելու պատճառով, հիւանդների ընդունելութիւնը ընդհատված է։
(օ. մ.) 50—32

Նոր լոյս տեսաւ
ԷՄԻՆԵԱՆ
ԱԶԳԱՍԷՐԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏՕԹԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
Մասն I. Ընդհանուր ազգագրական յօդուածներ. 1) Ազգագրութիւն, նրա բացատրութիւնը և սահմանները, 2) Նիւթեր հայ ազգագրութեան պատմութեան, 3) Համեմատական կրօնախօսութիւն, 4) Ֆոյլկլոր, 5) Յակոբ Գոհմ, նրա դպրոցը և նրա քննադատները։ Մասն II. Կոյլտուրի պատմութիւն Լիպպերտի։ էջ. 2+124+221.
Գինն է ճանապարհածախսով 1 ր. (2 ֆր. 50 ս.)։ 5 օրինակը միանուագ՝ 3 ր. 75 կ. (ճան. ծախսով)։ Բոլոր եօթը հատորը միանուագ՝ 6 ր. 50 կ. (ճան. ծախսով)։
Դիմել՝ Правленіе Лазаревскаго Института вост. яз., Москва (Institut Lazareff, Moscou).
(ու. կ.) 66. 5—3

Նոր հիւրանոց Վարշավայում
„Հիւրանոց պատաաժ“
որ գտնվում է Վարշավայի առևտրական կենտրոնում, Բէլեանսկայա, Թօլզայա և Նալիվօկ փողոցների անկիւնում, «Զիմօնսի Պատաժի» շինութեան մէջ, էլեքտրական տրամվայների կանգ առնելու տեղը, պարունակում է 100 նոր սարքված սենեակներ՝ արժողութեամբ 1 ր. 25 կ.-ից օրական, էլեքտրական լուսաւորութեամբ և կենտրօնից տաքացնելով։
Լողարաններ, էլեքտրական բարձրացնելու մեքենայ թէ մարդկանց և թէ ապրանքների համար, ապրանք դարսելու հնարաւորութիւն, քաղաքային տելէֆոններ և մոցուցմն Լօձի և Կալիշի հետ, կառքեր հիւրանոցից դէպի ամեն գնացքներ։
(ու.) (104) 18. 5—4

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով։
Այս մէջքը մի քանի օրում բոլորովին ոչնչացնում է։
Ցանցած կոշիկները և արմատները։
Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
(10, 20, 30) 50—34

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ
Վիսմարում, Բալտիկ ծովի վրա։
Դասընթացքներ այլազգիների համար։
Ընդունելութեան պայմանները ծրագրի մէջ են։
398567 10—3

1 ռուբլի ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ 1 ռուբլի
յայտնում է ի գիտութիւն, որ Վ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ համաձայնութեամբ լոյս տեսաւ ամենքի համար ժամանակի գնով, արտասահմանում տպագրված գունաւոր (96 տող.) 63×50 սանտիմետր մեծութեամբ
ՅԱՍՏՆԻ ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ
Գինն է 1 ռուբլի։ Ճանապարհածախսով 1 ռուբլի 25 կոպ.
Գումարով գնողներին արվում է զիջում։ Վճարը կանխիկ։
Դիմել՝ г. Тифлисъ, въ книжную торговлю «Гуттенбергъ.»
(հ. ու. կ.) 82. 5—2

ՆՈՐՈՒԹԻՒՆ!!!
Ծոցի ժամացոյց մշական օրացոյցով
1 ВЫЙ СОРТЪ.
Այդ ժամացոյցը ցոյց է տալիս օրը, ամսաթիւը և ամիսը։ Գիշերվայ իւրաքանչիւր 12 ժամին սլաքները աւտոմատիկ կերպով թռիչք են անում և ցոյց են տալիս եկող օրը և ամսաթիւը։ Բացի դրանից, այդ ժամացոյցը իսկական «անկէր» է, 15 քար. ընթացքով, սև պողպատից, լարվում է 40 ժամը մի անգամ ժեռալ. ցիֆերբլատով և ուղիղ ընթացքով։ ՄԵԿ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է!
Էժան ժամացոյցների եռևից մի ընկնէք, այլ բերել տուէք մեզանից այդ ժամացոյցը և դուք մեզանից միշտ շնորհակալ կը մնաք։ Գինը միայն 4 ր. 50 կ., 2 հատը 8 ր. 50 կ.։ Ուղարկվում է վերադիր վճարով և առանց կանխավճարի, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Առքումը 1 հատից մինչև 4 հատը 40 կ. (Սիրիր 75 կ.)։ Մօտային փոքրիկ շղթաներ իսկական նոր ոսկուց, գեղեցկաշէն բրէլօկով 75 կ. և 1 ր. 50 կ., երկու հատը 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Խնդրում ենք վերաբերվել մեզ կատարեալ վստահութեամբ, իսկ մենք համարձակվում ենք հաւատացնել ձեզ, որ ամեն ջանք գործ կը դնենք ապագայում ևս արդարացնել մեզ այնքան յաճախ արտայայտված վստահութիւնը և շնորհակալութիւնը։
Հասցէն՝ Штрумфельдъ, Варшава, Св. Креста 48. Отд. 23.
(յ. 3, 16, 30, փ. 13, 27, մ. 13) (66371) 1. 6—3

ԱՆՇԱՆ ԱԳԻՍԱՆՔՈՎ
իւրաքանչիւրը կարող է հագուստ ձեռք բերել թէ իրան և թէ իր ընտանիքի համար, նոյնպէս և ստանալ օգտակար և արժէքաւոր իր, եթէ կը հաղորդէ իր հասցէն բաց նամակով «Варонъ и Марковичъ» ընկերութեանը, մանուդէ և մանուֆակտուրային ապրանքների դէպոյին, Ռօվնօյում։ (Ровно, Волыжск. губ.).
(հ. ու.) 193827 19. 6—6